

ի վեր Հայաստանի հետ ամենին քիչ յարաբերութիւն ունեցող աշխարհ մըն էր, որովհետեւ եւ ո՛չ ուղղակի սահմանակից էր: Տիրարան Մեծ մը անշուշտ նաեւ Կիլիկեան քաղաքներ կ'ամայացընէ՝ իւր Տիրարանակերտի համար. բայց վերջապէս նոյն իսկ հայ դադութիւնը՝ ըստ երեւութիւն՝ ցանցառ եղած պիտի ըլլան այս կողմերը հնութեան ատեն: Եւ քանի որ նաեւ ասի արարական տիրապետութեան ներքեւ ինկաւ՝ Հայոց դադութիւնը շատ ալ սիրուած տեղ մ'ըլլալու չէր: Նկատի առնունք միայն Հ. Ղ. Ալիշանի դժած ժամանակագրական ցանկը<sup>14</sup>, եւ կը տեսնենք՝ որ բաց ի արարական աւանդութենէ մը՝ Հայոց Արարացիներէն վերաշինուած (809ին) Սիս դալու եւ բնակելու մասին (Բելազորի) իրական դադութականութիւնը կը սկսին Ժ. դարուն, այն ժամանակ երբ Գուրգուս կամ Գուրգէն եւ Գէորգ Մլեհ զօրավարները Ռոմանոս կայսեր օրով կըրցան վերջապէս Արարացիներէն խլել Մելիտենէն, եւ այնուհետեւ շարունակուեցաւ նոյն յաջողութեամբ վերատին տիրել նաեւ Կիլիկիոյ: Մանրամասնութեանց մէջ հոս մտնել չենք կրնար: Կը բաւէ զիտել որ Ժ. դարուն վերջն արդէն նշանաւոր թիւ մըն էր հայ դադութականութեան, որով Սաշիկ Ա. եպիսկոպոսներ կը ձեռնադրէր Տարսոնի եւ Սելեւոնի համար: Ի հարկէ այս տեղ հայութիւնը վերջնականապէս հոծացաւ միայն ԺԱ. դարու մեծ դադութականութիւններէ ետքը՝ Արծրունեաց ամբողջ ժողովրդով փոխադրուելէն Եփրատէն ասդին, Անուոյ անկմանէ, Կարուց արքային եւն ալ փոխադրուելէ ետքն ի Ծամուզաւ: Այս միջոցին հետզհետէ ստեղծուեցաւ միջավայր մը՝ որ Անուոյ Գաղկայ մահուանէ ետքը Ռուբէն մը՝ իր Բարձր բերդով՝ կրնար հիմ դնել Ռուբենեանց հարստութեան (1080ին), եւ յաջող պարագայից շնորհիւ (Սաշակերք եւն) կ'աճի այս ոյժը եւ դար մ'ետքը Լեւոն կրնար պաշտօնապէս իսկ թագ կապել (1196): Կիլիկիա կրնար ընդարձակել իւր սահմանքն ալ, եւ հոն ապաստանած կաթողիկոսութեան հետ՝ ուղղակի շարունակութիւն մ'ըլլալ Բագրատունեաց շրջանէն ետքը հայ ցեղի անկախութեան պատմութեան՝ մինչեւ վերջին արքային մահը (1393ին): Եւ սակայն ի վերջոյ այս պատմութիւնն ընդհանուր հայու-

<sup>14</sup> «Սիսուան», Վենետ. 1885, էջ 550 եւն. հմտ. ընդհ. պատմականը, էջ 35—67:

թեան մէկ հատածին եւ դարձեալ գաղթակաւորութեան մը պատմութիւն է:

Կարծենք ասի միայն կը բաւէ լիովին հաստատելու ինչ որ ըսինք ազգի մը բուն Հայրենեաց եւ անոր՝ սահմանակից թէ աւելի կամ նուազ հեռաւոր ստեղծած նստեւուն եւ դադութականութեանց մասին: Եւ ասի ի վերջոյ ո՛չ Հայոց յատուկ է, եւ ո՛չ այս կամ այն աշխարհարածնի: Քիչ շատ ամէն ազգ՝ հին ու նոր՝ նոյն երեւոյթներն ունեցած է՝ եւ ի հարկէ: Այսօր իսկ՝ օրինակի համար՝ «Գերմանիա» կամ «Գաղղիա»՝ անհամեմատելի պատմական դարգացմամբ եւ աստիճանաւ իսկ՝ վերջապէս նոյն չեն դերմանախօս եւ դադողիախօս աշխարհաց դուժարութեան հետ, եւ Բեղդիս մը՝ կիսով չափ դադողիախօս դաւառներով, նոյնպիսի մայրաքաղաքով ու պետական լեզուաւ ալ վերջապէս Գաղղիա չէ, եւ Հելլուստիս մը կրնայ դոյութիւն ունենալ դերմանական, դադողիական եւ իտալական մասերով: Իբր ընդհանուր օրինակ յիշուած այս իրերն եւ ո՛չ կրնան այլուստ համեմատուիլ Հայաստանի վիճակին հետ, որուն քաղաքական կեանքը ստիպուած էր առաջին օրէն իսկ տկար ըլլալ: Հայոց — աւելի ճիշդ նախահայ տարերաց — Ուրարտու մտնելն իսկ, եթէ անգամ մը կ'ընդունինք Կիմմերեան արշաւանաց հետ կապ ունենալը — դուրնթաց եղաւ Մարական տիրապետութեան, որուն յաջորդեց Պարսկականը: Եւ այս շրջանին ամէնէն աւելի պիտի կազմուէր հոն նոր հայութիւնը՝ ձուլելով եւ ձուլուելով, սատարապետութեանց շրջանակներու մէջ: Իւր անկախութեան օրերուն ալ միշտ մերձակայ տիեզերակալութեանց ազդեցութեան ներքեւ մնաց, միայն Տիրարանայ կարճատեւ շրջանին ինքնին կըրցաւ աշխարհակալութեան ձեռնարկել, այնուհետեւ մնալով Հռոմայեցոց եւ Պարթեւ-Պարսից միջեւ խաղալիկ մը՝ մինչեւ որ խաղաղիկ բաժնեցին իրենց մէջ: Աւելի կարելի չէ համեմատել Փոքր-Հայք՝ որ երեւան կու գայ պատմութեան մէջ իբր «կուսակալութիւն» մը, դարու մը չափ անկախութիւն մը կ'ունենայ եւ կը կլուի լիովին Պոնտոսէ, յետոյ իբր հոռմէական՝ իբր դար մ'ալ մանրապետութիւն կ'ըլլայ, վերջնականապէս մնալու համար այնուհետեւ դարերով նահանգ Հռոմայեցոց եւ Բիւզանդեանց, մինչեւ որ ԺԱ. դարու վերջերը յաջորդեցին Սելճուկեանք, միայն այս ԺԱ. դարու սկիզբը կրելով այնչափ փոփոխութիւն մը որ Արծրունեաց աւանդ՝ իւր ժողովրդով

ալ կու գայ հաստատուելու հոն՝ ինչպէս շրջակայքը, Բիւզանդեան պաշտպանութեան ապաւինելով՝ Սելճուկներու երկիւղէն: Արդեօք մտածեցին երբեք Հայք թէ այս դանդաւարին դադութականութեամբը դէպ ի արեւմուտք՝ Եփրատէն մինչեւ իսկ Բիւզանդիոն՝ թէ իրենք վերադարձ մը կը կատարեն այն երկիրներն, ուսկից — եթէ կ'ընդունուի անգամ մը Հայոց դոնէ կարեւոր մէկ տարրին թրակեան-փոխակալան ըլլալը — իրենց նախահայրերը՝ հակառակ շարժմամբ՝ դիմած էին դէպ ի արեւելք, դէպ ի Եփրատ, եւ Եփրատէն անդին՝ հին Ուրարտուի շրջանակին մէջ կազմած իրենց Հայաստանը:

(Շարունակելի:) Զ. Յ. ՏԱՇԵԱՆ

**ԲՋՆՈՒՆԵՆՑ ԺՈՎԻ ԿՂՋԻՆԵՐՈՒ ԵՆ ԵՊԱՏՆԵՐՆ ՈՒ ՎԵՆՔԵՐԸ\***

Բ.

**ԿՏՈՒՅ ԵՆ ԵՊԱՏ**

1. ԿՏՈՒՅ ԿՂՋԻՆ

Բնունեաց ծովի երկրորդ կղզին է Կտուց, որ Լիմէն շատ պղտիկ է եւ ունի մէկուկէս վերստ երկայնութիւն եւ կէս վերստ լայնութիւն: Վան քաղաքէն չորս ժամ հեռու է: Կը գտնուի Վանի արեւմտեան-հիւսիսային կողմը, Ամենաշատի դիմաց: Երբեմն իբրեւ թէ շարունակութիւնն եղած իր հանդէպ գտնուող թերակղզիին, իսկ այժմ բոլորովին բաժնուած ջրանցքով մը, որ երկու երեք մարդաչափ խորութիւն ունի (Արձագանք, 1882, էջ 313): Կը կարծուի թէ կղզիին ցամաքէն այս բաժանումը տեղի ունեցած ըլլալու է 1810ին, որ սակայն սխալ է, վասն զի Վանայ ժամանակագրութիւնը կը գրէ «Յամի Ռձիֆ» (1713) նորոգեցաւ Կտուց ԾՈՎԱՊԱՏ անապատն Ս. Կարապետու սրբատաշ վիմօք» (Հանդ. Ամս., 1888, էջ 196 հմտ. եւ վարը):

Կտուց նման է Աղթամարի: Ապառաժուտ՝ սակայն «բաւականին հարթ տարածութեան վրայ ունի հարթավայրեր, որոնց մի մասում, որպէս վարելահողերի, ցանում են հացահատիկներ եւ այլ հունտեր եւ մի

մասումն են խնամքով պատրաստուած մեծ եւ փոքր պարտէզներ, բանջարանոցներ, որթատունկ բարունակներ՝ յատկացուած այս եւ այն վարդապետի եւ մոնթի որպէս իրանց աշխատութեան արդիւնքն» (Շէրենց, Սրբավայրեր, էջ 72): Կտուցի մէջ եւս կը գտնուին մեծ թուով նշենիներ:

Հաւանօրէն կղզիս իր անունը կը պարտի կտուցի նման ունեցող իր արտաքին ձեւին ու տեսքին, թէեւ բարեպաշտիկ աւանդութիւնը անոր անուանակոչութիւնը դէպքի մը կապած է, ինչպէս պիտի տեսնուի քիչ վերջ:

2. ԿՏՈՒՅ ԱՆԱՊԱՏԻ ՆԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Կտուց կղզիին վրայ կը գտնուի համանուն անապատը, — եկեղեցոյն անունով կոչուած նմանապէս Ս. Կարապետի անապատ կամ վանք — որ երկար դարեր դիմանալով հասած էր մինչեւ մեր օրերը, թէպէտ յաճախ արտաքին ու ներքին փոթորիկներ ուղեր են անոր կամարները խորտակել:

Կտուց անապատը բաղկացած է տաճարէ մը, դաւիթէ մը, դարպասէ մը եւ բազմաթիւ մութ ու խաւարչաին սենեակներէ եւ «Իրսի տուն» ըսուածէն, որ լճին հարաւային ափին (կղզիին դիմացը) կը գտնուի:

Տաճարը, ուր կը պահուին Ս. Կարապետի մասունքներէն (Սարգիսեան, Տեղագրութիւն, էջ 278) անուանուած է Ս. Կարապետ, նաեւ Ս. Սաշ, ինչպէս ձեռագիրներու յիշատակարանները կը հաւատեն: Սեղանը նուիրուած է Աստուածամօր, իսկ աջակողմեան խորանը Ս. Կարապետի եւ ձախակողմեանը Ս. Ստեփանոս Նախալկայի: Տաճարը քառանկիւն է եւ ունի երկու՝ ամբողջական ու վեց՝ կիսասիւններ, որոնց վրայ կը բոլորուին պայտածեւ կամարներ՝ իրենց վրայ կրելով ութանկիւնի զմբէթը, որ կոնաձեւ կաթողիկէով պսակուած է: Արձանագրութիւն մը կը պատմէ՝ «Յիշեցէք Բաղչէցի վարպետ զմահտեսի անարժան Սոշխաթարն, եկն ի սուրբ անապատն շինեց զեկեղեցին զուճէթով, բնաւ հախ շառաւ, բաշխեաց սուրբ Կարապետու յիշատակ իւր հոգւոյն եւ ծնողացն Յովանիսին, Զմբութին, Մընուկին եւ Սահակին թվ. Ռձիֆ» (1713)<sup>1</sup>:

Տաճարին սիւները քառակուսի են, պարզ եւ առանց խարխախի: Սոջակներն անպաճոյճ:

<sup>1</sup> Այլ թուականէն է եւ այս արձանագրութիւնը «Բաղչէցի Մարգսէ Սոշխաթարն զկազմողս յիշեցէք Բիւրստոս Ռձիֆ» (Ազգր. Հանդ., 1911, էջ 94):

կողակը բոլորակաձեւ է, կամարակապ եւ պայտածեւ կամարով: Տաճարին պատերը երբեմն զարդարուն էին պատկերներով: Լուսաւորուած է հինգ եւ փոքր պատուհաններով:

Տաճարին դուռը կը բացուի դէպի դաւիթ եւ զարդարուած է քանդակներով ու նկարներով: Անոր կամարակալ քարին վրայ դրուած է սա արձանագրութիւնը՝ «Շնորհօք ամենակալին եւ ամենազօր աջոյն անեղին շինեցաւ սուրբ տաճարս որ յանուն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Ստեփանոսի ի թվին Հայոց ՌՃԿԱ (1712) եւ ի հայրապետութեան Աղեքսանդրի եւ առաջնորդութեան Սիմէոն արհիեպիսկոպոսին, որ Ծ. ամ ծառայեաց սուրբ անապատիս եւ կարողութեամբն Աստուծոյ շինեաց սուրբ տաճարս, որ մէկ քար երկու ոսկի եղաւ եւ է. ամ ի հալածանս եկաց վասն ահի պարտատէրացն եւ եկեալ աստ վախճանեցաւ, զոր Տէր Քրիստոս զնա ընդ Յոհանու Ոսկերեքանին դասաւորեցէ, մանաւանդ Երեմիա հօրն: Եւ զարձեալ ծաղկեցաւ դուռս յոյժ զարմանալի գեղեցկայարմար ծաղկօք զովելի կարողութեամբն սրբոյն Կարապետի՝ նկարեալ ձեռամբ Մարտիրոս վարդապետին»:

Տաճարին դրան երկու կողմերը՝ դարպասի մէջ, կը գտնուին երկու խորաններ՝ նուիրուած Ս. Յակոբի եւ սուրբ Մինասի: Առաջնոյն առջեւ թաղուած են Սիմէոն արքեպիսկոպոս եւ Երեմիա եպիսկոպոս:

Դարպասը քառանկիւն շինութիւն մըն է եւ ունի չորս քառանկիւն պարզ սիւներ ու նոյնպիսի որմնասիւններ, որոնց վրայ կը բոլորուին պայտածեւ կամարները: Օժտուած է ինը փոքրիկ եւ նեղկեկ լուսամուտներով: Դարպասին հիւսիսային պատին մէջէն դուռ մը կը բացուի դէպի թաղակապ պղտիկ մատուռ մը<sup>2</sup>, որ սեղան մը ունի — նուիրուած Հրեշտակապետներու: Իսկ զարպասին արեւմտեան դրան երկու կողմերը կը բարձրանան երկու քառակուսի սիւներ, որոնց վրայ կը հանդէի զանգակատունը, որ գմբէթին տակ Քրիստոսի Համբարձման նուիրուած վէժքար մը ունի:

Վանքին արեւմտեան-հիւսիսային կողմը կը գտնուին հին խուցերը, իսկ երկար նըրբանցքի երկու կողմը դասաւորուած են սե-

<sup>2</sup> Այս տեղ կը պահուէին անապատին ձեռագիր մատենաները:

նեակները, ցած, կիսամութ ու խոնաւ<sup>3</sup>: Սենեակներէն շատերուն պատուհանները դէպի նըրբանցք բացուած են, որպէս զի միաբանները արտաքին պատուհաններէ աշխարհի սնտրիներու չնային ու անոնցմէ հրապոյր չատանան ունայնութիւններու կրկին դառնալու:

Բայց եկեղեցւոյ արեւելեան կողմը շինուած է մեծ եւ կահաւորուած սենեակ մը պատուաւոր հիւրերու ընդունելութեան համար, իսկ հարաւային կողմը կառուցուած է վանահօր բնակարանը<sup>4</sup>:

Կտուց կղզիի գիմացը կը գտնուէր անապատին «Դրսի տուն» ըսուած շէնքը, ուր կային քանի մը սենեակներ, եկեղեցի մը, պղտիկ դպրոց մը, շտեմարան ու դոմ: Դրսի տունը շինուած է ցամաքամասի հետ յարաբերութիւնները գիւրացներու եւ նորամուտ՝ մանաւանդ զեռ փոքրիկ ու ծաղկատի թէկնածուններու ընդունելութեան, բնակութեան եւ կրթութեան համար:

3. ԿՏՈՒՅ ԱՆԱՊԱՍԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Աւանդութեան համեմատ, որ 1700 թուին գրուած կոնդակի մը մէջ կը յիշուի, Ս. Գրիգոր Լուսաւորիչն է Կտուց անապատի հիմնադիրը: Կը պատմուի թէ՛ Ս. Գրիգոր Հոռմէն վերադարձին իր հետ կը բերէ Կենաց փայտէն մաս մը եւ եօթը սուրբերու նշխարներ: Կը հասնի Կտուց կղզին եւ ահա կը լսէ ձայն մը՝ «Ձմեկ հոս ամփոփէ»: Ս. Հայրապետը կը հնազանդի կոչին եւ նշխարներն եօթը տեղ գետեղելով անոնց վրայ նոյնքան եկեղեցի կը շինէ եւ իր ձեռնասուն աշակերտներէն մին առաջնորդ կը կարգէ<sup>5</sup>: Կամաց կամաց հոն կը հաւաքուին 500 հոգի: Օր մը միաբաններէն երեքը դժբախտութիւնը կ'ունենան հիւանդանալու եւ մեռնելու: Սպասաւորները անոնց մօտ գալով կը տեսնեն, որ անոնց շուրջը «Կուտուց (խումբ) հրեշտակ իջեալ էին»: Միաբաններն այս իրողութեան իրազէկ՝ կը համախմբուին ու

<sup>3</sup> Բայց եւ այնպէս աւելի կոկիկ եւ ընդարձակ քան Լիմի սենեակները (Արեւելք, 1901, թ. 4785):  
<sup>4</sup> Կտուց կղզի եւ անապատի մասին հմմտ. Linch, Armenia, II, էջ 33-35 եւ Ազգ. Հանդ., 1911, ԻԱ, էջ 88-98:  
<sup>5</sup> Հաւանորէն այս աւանդութեան ազդեցութեան տակն է որ 1711ին գրուած վարք Հարանցի յիշատակարանի մը մէջ կը գրուի «Կտուցու անապատ ասի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետին՝ Լուսաւորչաշէն սուրբ տաճարին» (Ազգ. Հանդ., 1911, էջ 88):

կ'ըսեն մէկ մէկու «Կուտուց հրեշտակ իջեալ էին, վասն այսորիկ կոչեցաւ անուն տեղւոյս Կուտուցու անապատ»<sup>6</sup>:

Թէեւ աւանդութիւնը Կտուց անապատի հիմնարկութիւնը Լիմի պէս Ս. Գրիգորի ժամանակը փոխադրել կը ջանայ, սակայն պատմական տեղեկութիւններ անոր մասին վերջին դարերէն են: 1414ին հոս կը գրուի փոքրագիր աւետարան մը Յովսէփ քահանային ձեռքով «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թվին Հայոց ՊԿԳ (1414) ի դրան սուրբ Խաչին եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչին... որ կոչի Կտուց...: Ի հայրապետութեան Տեառն Հայոց կաթողիկոսի տէր Դաւթի, սուրբ Խաչի Ախթամարա(յ) առաջնորդի եւ առաջնորդութեան սուրբ ուխտին սուրբ Կարապետին... արհիեպիսկոպոսին Միսարա...» (Բարխութաբեան, Արցախ, էջ 145): Յաւ է որ առաջնորդին անունը կարելի չէ եղած ճշդիւ կարգալ:

Մէկ տարի յետոյ 1415ին Ծերուկ գրիչ կը գրէ Ժողովածու մը «ի Կտուց անապատ» (Նօտարք, էջ 47): Իսկ քանի մը տարի վերջ՝

<sup>6</sup> Մեր Մատենադարանի թ. 14 ձեռագրին մէջ (որուն մասին ապա) թղ. 40բ—41ա. այսպէս կը գրուի՝ «Այնքան ճոխացար վերնային փառօք ո՛վ յարկ տիրարնակ, մինչ զի եւ երկնադամարն դասուց երջանկաց խորից իջարան եղեր եւ զգովելիլ քո յամենայն լեզուէ ընկալար զիտուած: Քանզի ըստ պատմութեան զքէն քոյ ինդրակաց զհիւանդութեան արտանայն զախտ որունն ի քեզ ընկել ճշմարտէր անձանց եւ բարի մահուան վախճանօք յեղձական կենաց յերկինս յանիմանալին մերս զպայտութեանց յանապականարուզիս տեղին փոխադրել պաշտպանն ազգէր երջանիկն հօրն արձգրածայն բարբառով աւետարան քանի: Եկ հայր ընդ քեզ ունելով զամենայն եղարցոս ի սքանչելացս տեսութեան ի յերանելի ճշմարտիս այս հանգարտանիքն անց խմբից խոնարհեալ տեսանեն յաւանդունն հոգւոյ սորին սրբութեան որում սպասաւորմնս: Որոց անդէն առ նմին վազվաղ շտապելով այրովք կրծաւորական հանդիսին եւ դոյթ արկեալ սուրհանդակօրէն երկնաչու ոտիցն յեղեղմամբ յառաջ խաղացեալ եւ սրբահետ զարշապարացն ընդ հող բոկազնաց արշաւանս ձօնեալ զկայ հանգստեան անոյր դիմունն ընթացից ի յարկն սրբարնակ եւ ահա տեսանէին լոյս ճաճանչաւտ յերկնից ցոլացեալ հրեշտակաց դասուք ի նսեմն յարկ բնակութեան խցկանն այնորիկ, յորում բնակէր երանելին այն եւ յոր կենդանուի ի մարմնոյն կուտ թաղակացալ անձամբ յարանդաց սրտիս եւ քաղցրափայտ շրթմամբ...: Չոր տեսեալ ի յերկիր կորացեալ անբաւ զհուրութեան փառս մատուցանէին միոյն Աստուծոյ զպայտիսի գործս գործողի ի գիւրսն փառաւորի ծառայս կամակատարս: Ուստի եւ այնու տեսեալմբ զանուն մենաստանիդ Կուտուց անուանեցին իրր թէ զպտուց հրեշտակաց խմբարան տեղի հիւհարչալ»:

<sup>7</sup> Ուրիշ աւանդութեան մը համաձայն նախապէս Սեւանէն Լիմ եւ անկէ Կտուց փոխադրուող արեղայի մը միջոցաւ կը շինուին եկեղեցիներ եւ ապա վանականներ հոն կը համախմբուին» (Արեւելք, 1901, թ. 4785): Այս պատմական կորիզ ունի, ինչպէս ապա պիտի տեսնուի:

1422ին Յայտաւորքի մը յիշատակարանին մէջ պահուած են սա կարեւոր տողերը՝ փառք... պատուական կրօնաւոր եւ բարեւէր արեղայն Աստմ սիրով ցանկացաւ այսմ աստուածարեալ զանձիս եւ ստացաւ զսա յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց Պարիշահին եւ Մարթային: Նաեւ զմիաբանքն սուրբ ուխտին Կացի սուրբ Խաչին եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Գրիգորին եւ սուրբ Հոսիսիսիսեանցն, զառաջնորդ ուխտին զտէր Միսիթար եպիսկոպոսն եւ զԿարապետ սպասաւոր բանին եւ զՄեղիսէթ կրօնաւոր եւ զՄկրտիչ կրօնաւոր եւ զՅովսէփանէս կրօնաւորն, այլ եւ զԴաւիթ կրօնաւոր, հանդերձ ամենայն բնակչօքն... (Նօտարք, էջ 68): Այս յիշատակարանէն կարելի է՝ սրբագրել նախընթաց անունը՝ «Միսիթարայ» եւ նմանապէս հետեւեցնել որ այս շրջանին բաւական ծաղկած ըլլալու է Կտուց անապատը, որ եպիսկոպոս առաջնորդ ունի եւ բաւական թուով ալ միաբաններ:

4. ԿՏՈՒՅԻ ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐՆ ՈՒ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ

Միսիթար արքեպիսկոպոսի անմիջական յաջորդներու անունները դժբախտաբար մեզի չեն հասած: Յակոբ եպ. Թօփուղեանի Տարեգրութեան համեմատ 1462ին Կտուցի վանահայրն էր Գրիգոր եպիսկոպոս (Նօտարք, էջ 207): Այդ թուականին Կտուց կը նորոգուի Ստեփանոս վարդապետի ձեռքով եւ այն կամեցողութեամբ Գրիգոր եպիսկոպոսի, ինչպէս յայտնի է սա յիշատակագրութենէն, ուր դժբախտաբար չէ նշանակած նորոգութեան պատճառը (արդեօք հնութեան պատճառով թէ՛ աւերի ենթարկուած):

«Աւարտեցաւ քրիստոսահիմն եւ քաջ նահատակաց եւ մարտիրոսաց հողիարուիս սուրբ տառս ի յամի ՋԺԱ (1462) ի վանքս, որ կոչի Կտուց ընդ հովանեաւ սուրբ Խաչիս եւ սուրբնշխարաց ճառագայթի ճրագ ճշմարտութեան սուրբ Կարապետիս, որ յայսմ ամի նորոգեցաւ մոլայիւ (սպիտակ բոամբ) ձեռամբ Ստեփանոս վարդապետի, որ մակահուն Փարակ կոչի եւ կամեցողութեամբ Գրիգոր եպիսկոպոսի, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս...: Յիշեցէք յաղօթս ձեր զՍտեփաննոս վարդապետն, որ է հոգեւոր հայրն մեր... որ է փիլիսոփայ երիցական արհեստի եւ ծաղիկ ժամատեղաց եւ է գիտակ ամե-

նայն հին եւ նոր կտակարանաց աստուածային գրոց գիտութեան...» (Նօտարք, էջ 207—208. հմմտ. Աղղր. Հանդ., 1911, էջ 89 եւ Բիւզանդիոն, 1900, Թ. 1196):

Հոս 1472ին կը գրուի աւետարան մը՝ «Գրեցաւ սա ի թվականիս Հայոց ԶԻԱ ի սուրբ ուխտս որ կոչի Կտուց ընդ հովանեաւ սուրբ Խաչիս եւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Կարապետիս եւ սուրբ Ստեփանոսիս եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչիս եւ սուրբ Հռիփսիմեանց ձեռամբ մեղսանենկ Յովանիսի ի խնդրոյ Մկրտչին եւ Խաղբէկին», կը յիշուին «վարպետն իմ Գրիգորն եւ Խաչատուր կրօնաւորն. զի շատ հայրութիւն անէ մեզ (Տէր Աւետիսեան, Յուլ. հայ. Ձեռ. Նոր Զուգայի [անտիպ], Թ. 62): Երեք տարի յետոյ (1475էն) կ'աւարտի աւետարան մը «ի ներքսագոյն եւ աստուածաբանկ յանապատիս, որ կոչի Կտուց ընդ հովանեաւ սուրբ եւ սքանչելագործ սուրբ Կարապետին եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Ստեփանոսի եւ սրբոց Հռիփսիմեանցս, որ աստ կան հաւաքեալ» (Աղղր. Հանդ., 1911, էջ 90 եւ Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 471/73): Գրիչն է Խաչատուր, որ շատ եռանդուն արտադրող եղած է: Նա է որ 1481ին գրած է ուրիշ աւետարան մը. «Գրեցաւ զաւրութեամբ եւ յաջողութեամբ սուրբ Հոգոյն սուրբ աւետարանս ի աստուածաբանակ, ի հրեշտակաձեմ եւ ի ներքսագոյն կղզիս, որ կոչի Կտուց ընդ հովանեաւ լուսազարդ եւ սքանչելագործ եւ զիւհաւաքած սուրբ Կարապետիս եւ Լուսաւորչալէն սուրբ Խաչիս եւ սուրբ Ստեփանոսիս եւ սուրբ Աստուածածնիս... ձեռամբ փձուն եւ անարհեստ գրչի Խաչատուր ի խընդրոյ սրբապետ եւ մաքրամիտ արեղային Վարդանայ, որ զեկեղեցւոյ գլուխն ս(ու)աղեաց եւ զարտն ի Շատուան երար սխֆ եկեղեցւոյն, ի թվականիս մերում ԶԼ (1481)» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 489):

Եռանդուն գրչագիր էր նաեւ Յովհաննէս քահանայն, որ կ'օրինակէ Աւետարան մը, ուր կը խնդրէ յիշել՝ «ԶԳրիգոր եպիսկոպոսն եւ զՍարգիս եպիսկոպոսն, եւ զմեծ Խաչատուր կրօնաւորն զվարպետն իմ եւ զԳրիգոր վարպետն իմ, եւ զՅակոբ կրօնաւորն եւ զՍտեփանոս կրօնաւորն եւ զԽաչատուր Խէրպետն եւ զՆերսէս կրօնաւորն եւ զԿարապետ եկեղեցւոյնս եւ զՄինաս ծագկաւղն եւ զայլ քահանայսն եւ զմիտարան ուխտիս...: Եւ արդ գրեցաւ սա ի թվականիս Հայոց ԶԼԻ ի յաստուածաբանակ սուրբ ուխտս

որ կոչի Կտուց ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Խաչիս եւ սուրբ Կարապետիս եւ սուրբ Ստեփանոսիս եւ այլ ամենայն սրբոցս, որ աստ կան հաւաքեալ ձեռամբ մեղսանենկ Յովհանիսի (հայրը Խաչիւր) ... Եւ այդ գրեցաւ սա ի դռնն եւ ի նեղ ժամանակիս զի վասն ծովացեալ մեղաց մերոց Երզնկա քաղաք տապալեցաւ եւ ԺԼԽ ողի ի ներքեւ հողս մնաց եւ այլ ոչ մնաց մի կենդանի եւ տաճկունք փակեցին զՍքանչելագործն: Բայց յայս ուրախ եմք զի կրակ անդաւ եւ երեց զՔարայն ԺԲ. Մընիրա ի հետ եւ վեց հազար ողի» (Հ. Ն. Ակինեան, Հաւաքունմն Յիշատակարանաց, Laz. 112):

Ինչպէս յառաջ բերուած յիշատակագրութիւններէն յայտնի կ'ըլլայ երկարատեւ եղած է Գրիգորի առաջնորդութեան շրջանը, որ ատեն անուանի եղած է Խաչատուր: Սակայն ցաւալի է, որ 1483էն սկսեալ մինչեւ 1604 անապատիս մասին տեղեկութիւն չկայ եւ այս լուծիւնը Լալայեանցին կասկած կ'առթէ՝ «ըստ երեւութիւն աւերուած պիտի լինի» (Աղղր. Հանդ., 1911, էջ 90):

Պատմութեան կապը կը սկսի 1604ին: Աւետարանի մը յիշատակարանին մէջ կը կարգանք՝

«Ի թվականութեան Հայոց աղղի, Հազար յիսուն երեք ամի (1604) Հայրապետութեան տան էջմիածնի Մելիքէթ կաթողիկոսի Եւ մերոյ աթոռակալի Ի առաջնորդն է Սուրբ Կարապետի Կղզընացեալ ի մէջ ծովի ԸՍտեփանոս վարդապետի. Կրօնաւորը միապէս Մեծ եւ փոքունք հաւասարապէս Զձեզ աղաչեմ եղբայրապէս Յիշման աննէք արժանապէս»:

(Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 812:)

Այս եւ յաջորդ յիշատակարանը, որ 1621էն է, կու գան խորհիլ տալու թէ Կտուց անապատի աւերումի մասին Լալայեանցի կասկածը զուրկ է այնքան ալ հիմնաւոր չէ, թէ եւ կ'երեւայ թէ ծանր օրեր անցուցեր էր եւ կ'անցնէր դեռ, վասն զի երկարատեւ աւերումէ յետոյ չէր կրնար այսքան շուտ վերակենդանանալ ու ծաղկիլ: «Եւ արդ գրեցաւ սա (Պատմութիւն վարուց մեծին Ներսէսի ի ձեռն Պօղոսի ի թվ. ՌՉ) ի յերկիրս Վանայ ի սուրբ ուխտս որ կոչի Կտուց ընդ

հովանեաւ սուրբ Կարապետին եւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Հռիփսիմեանց եւ սուրբ Գայեանեանց ի յառաջնորդութեան մերոյս աթոռոյ փոքր Ստեփանոս կաթողիկոսի... զտէր Գէորդ, զտէր Սահակ, եւ զտէր Յակոբ եւ զտէր Թովմէն եւ այլ միտարան եղբարցս ի դռնն եւ ի նեղ ժամանակիս որ այս ԺԶ. ամ է, որ կամք տառապանօք ի ձեռս այլազգեաց սովով եւ փախստեամբ եւ զվերջն ոչ կարեմք իմանալ» (Հ. Ն. Ակինեան, Հաւաք. Յիշատակարանաց. Գեղամ էՓ. ի ի, Յուլ. հայ. Ձեռ. Տարծոյ):

Ներսէս վարդապետ Մովսէսի վանքերու բարենորոգումի շարժումը Կտուց ալ կը հասնի: Անոր մահէն յետոյ՝ Ստեփանոս Շատախեցիի առաջնորդութեան ժամանակ Լիմ անապատի միաբանները կը բազմանան եւ անոնցմէ մաս մը Կտուց կ'անցնի եւ հոն կը հաստատուի «Եւ յայսմ ժամանակիս եւ եւս աճեցին միաբանք Լիմայ անապատիս, վասն որոյ ոմանք ելեալ ի Լիմայ գնացին ի տեղին, որ անուանի Կտուց որ եւ սա կղզի է ի մէջ նոյն ծովուն եւ անդ եւս շինեցին անապատ եւ եղբայրանոց եւ է այժմ հաստատ ամենայն կրօնաւորական կարգօք» (Առ. Դաւ., էջ 254): Առաքելի «չինեցին անապատ եւ եղբայրանոց» հասկանալու է այն իմաստով որ՝ այն տեղ ալ մեծ Անապատի եւ Ներսէս Մովսէսի կանոնադրութեան համեմատ սկսան այսպէս ըսենք բնիկներն ու եկերն ապրիլ եւ որովհետեւ բազմացան՝ նորանոր շինութիւններ եւ յաւելումներ եղան բնակարաններու համար, որպէս զի միաբանները պատասխարուիլ կարենան:

Յաւալի է որ այս կարեւոր շրջանին մասին բացի Առաքելի խօսքերէն ուրիշ աչքառու յիշատակութիւն չունինք (ժամանակակից): Միայն գիտենք որ՝ Տէր Սարգիս Լիմի մէջ աւարտուած Եւաղրեայ գրութիւնները՝ յիշատակ կու գայ Կտուցի անապատին «... Աստուած ողորմի ասացէք տէր Սարգսի, որ ետ զգիրքս յիշատակ ի դուռն սուրբ Կարապետայ Կտուց անապատին» (Հ. Ն. Ակինեան, Հաւաք. Յիշատակարանաց, էջմ. 45): Եւ Կիրակոս Արջակեցիին 1642ին «Կտուցու ծովահայեաց սուրբ Կարապետին» աւետարան մը կը նուիրէ (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 776): 1652էն յետոյ Կտուց կ'այցելէ Յովհ. Շոռոթեցի:

8 1627ին գրուած աւետարան մը Դաւիթ Արտաթէպիցի նուէր կ'ընէ Կտուցի անապատին (Լալայեանց, Յուլ. Ձեռ. Վասպ., էջ 874):

«Արդ ես... Յովաննէս եւեթ անուամբ կոչեցեալ վարդապետ յերկրէն Նախընտանու ի դաւառէն Երընջակայ եւ ի զեղաքաղաքէն Շոռոթու, որդի վարդան քահանայի առ Գրիտոս Աստուած փոխեցելոյ (կ'երթայ էջմիածնէն Երուսաղէմ ուխտի, անկէ կը դառնի Շոռոթու Ս. Լուսաւորիչ վանք եւ ապա)՝ Յետ ժամանակաց ինչ ելեալ ի վանաց մերոց եւ եկաք յերկիրս Վասպուրականի, յանապատս սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Կարապետիս, որ մականուն Կտուց յորջորջի, որ է ծովապատ եւ ծովահայեաց տեղի վանքիւն: Եւ աստ եւս կայր ընտիր օրինակ հին քարոզիչք մի եւ մեք սկսաք զաղափարել, սկիզբն արարաք ի ձի քարոզէն, որ է մեծի Բչի քարոզէն մինչեւ ի վերջ գրքիս աւարտեցաք, զորս մեք գրեցաք եւ զորս քաղաքացի տէր Առաքել հոգիաշունչ եւ ճարտար քարտուղարն» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատակարանաց, էջմ. 2111, Ժողովածու քարոզից յընթացս 1652—1673 ամաց):

1681ին Կտուցի վերատեսուէն է Մարտիրոս վարդապետ Գանձակեցի (Վասպուրականի Գանձակ գիւղէն) «ի Թուականութեանս Հայոց ՌՃ եւ Լ (1681) ամին, ես տէր Մարտիրոս... ի զեղջէն որ կոչի Գանձակ, ... եւ վերատեսուէ սուրբ մենաստանին Կտուց սուրբ անապատիս (ստացայ զգիրս մեկնութեան Սաղմոսաց Վարդանայ եւ Մեկնութիւն Դանիէլի՝ Յովհ. Երզնկացւոյ) յիշատակ ինձ եւ ծնօղացն իմոց Յօհանիսին եւ Խանաղին եւ միակամ քահանայից եւ հայր Կարապետին... եղի զսա յիշատակ անջնջելի ի դուռն Կտուց սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատակարանաց, էջմ. 1187) 9:

Դժբախտարար այսքան է Մարտիրոսի մասին մեր գիտցածը:

Մարտիրոսին յաջորդն է Դաւիթ Թօխաթեցի, որ 1694ին կը յիշուի. «Գրեալ (Վարք Հարանց)... եւ յառաջնորդութեան Կտու(ւ)ցու Թօխատցի Դաւիթ վարդապետի» գրիչն

9 1692ին «ի ծովապատ կղզուլ Կտուց անապատի» Հայրապետ կը գրէ Ներսէս Լամբրոնացիի Սաղմոսաց մեկնութիւնը, իսկ 1697ին Մարտիրոս կը գրէ Բանք Տօմարականք (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ.): Իսկ 1701ին գուցէ վերջնական Հայրապետն է որ Կտուցի մէջ կը կազմէ Աւետարան մը (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 1028): — Կտուցի մէջ կը գտնուէր բոլորազիր Աստուածաշունչ մը գրուած 1285ին. հմմտ. Զարբանէլեան, Մատենադարան հայ. Յարգմանութեանց, Վեներիկ 1889, էջ 156, հմմտ. նաեւ ուրիշ մը գրուած 1669ին, Սրբանձտեանց, Հնոց Նորոց, Կ. Պոլիս 1874, էջ 127—134 եւ Ակինեան Հ. Ն., Յովնաթան Նաղաշ, Վիեննա 1911, էջ 56):

է Աւետիս երէց (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ., Հ. Պօտուրեանէն եւ սա Փիրրալէ-մեանէն):

ԺԲ. դարու սկիզբները Կտուց անապատը կա՛մ հնութեան հետեւանքով, կա՛մ քաղաքական դժխեմ պատահարներու պատճառով կը քայքայուի եւ նորոգութեան կը կարօտի: Այս պատճառով իր առաջնորդ Սիմէոն վարդապետն էջմիածին կ'երթայ եւ Աղեքսանդր կաթողիկոսի հոգեպնդիչ յորդորներու վրայ կը ձեռնարկէ Կտուցի վերանորոգութեան՝ առջեւն արձանացած ամէն դժուարութիւններու առաթուր կոխելով (Աղբր. Հանդ., 1911, էջ 94. Արեւելք, 1901, Թ. 4785): Վերանորոգումի հրամանագիրն ստանալու համար հարկ եղած է մինչեւ 27 քսակ դրամ վճարելու, մինչ ասոր հակառակ ճարտարապետն ազնիւ կը դանուի եւ «հախ» առնելէն բարեացակամօրէն կը հրաժարի (հմտ. վերը): Վերաշինութիւնը դէշ օրերու եւ պարզաներու մէջ տեղի ունենալով՝ հարկ կ'ըլլայ<sup>10</sup> նոյն իսկ մէկ քարը, բնական է մեծ ու յարկի, երկու ոսկիի առնուլ եւ Սիմէոն պարտքերու տակ ինչալով պահիկ մը ինքներեն խնայելու համար եւ ոչ թէ պարտքերը չվճարելու մտքով, պարտատէրներու աչքերէն խոյս կու տայ՝ կը փախչի: Ապա կրկին կը վերադառնայ Կտուց անապատը, որուն յիսուն տարի անխոնջօրէն եւ անձնանուիրաբար ծառայած էր եւ կը մեռնի հոն: Տապանաքարին մը վրայ դրոշմուած է՝ «Ուարանգեաց Սիմէոն վարդապետի եւ կրօնաւորաց նոցին սուրբ աղօթիւք Տէր Յիսուս Քրիստոս վճարէ ի ձեր հօգին» (Աղբր. Հանդ., 1911, էջ 94):

Սիմէոն արհիպիսկոպոսի թեւ ու թիկունք կ'ըլլայ Կտուցի նորոգութեան մէջ Երեմիա վարդապետ, որ Բաղէշ կ'անցնի նպաստ հաւաքելու համար, ինչպէս հետեւեալ արձանագրութիւնը կը վկայէ՝

«Շնորհօք եւ ողորմութեամբ Աստուծոյ եւ սրբոյ օգնականութեամբ Յովաննու եւ միաբան մեծ եւ փոքր կամեցաք զսուրբ Կտուցայ անապատն նորոգել. ես Երեմիա վարդապետս եկի ի մայրաքաղաքն Բաղէշու սիրով հարկեք ա(րա)րին. Մեսրոպն,

<sup>10</sup> Բարեբաւորէն նպաստատու ձեռքեր չեն պակասիր՝ «ՌձԿԲ... ի սոյն թիւ նորոգեցաւ Կտուց ծովապատ անապատ սուրբ Կարապետու եկեղեցին սրբատաշ քարամբք ձեռամբ նորին առաջնորդ Սիմէոն վարդապետի եւ Երեմիային, բայց արդեամբք ամենայն Քրիստոսն էր» (Սրուանձառեանց, Մանասայ, Կ. Պոլիս, 1876, էջ 366):

զներսէսն, զԱրրահամն, զՄանուէլն դարբեպիսկոպոսքն: Աստուած զԴ. վանքն, զԴ. եկեղեցիքն հաստատ սրահէ, զվարդապետքն, զքահանայքն զմեծն եւ զփոքրն եւ զոր ինչ ողորմութիւն ի ձեռն մեր հատուցիք, թէ վարպետք թէ ուսթաք, թէ իրդաթք սղորկեցիք ի սուրբ անապատն, սկիզբն շինութեան դուք արիք, սիրելի Բաղիշեցիք, ձեր զրածն փոխարէն սուրբ կուսի եւ սուրբ Կարապետի եւ կրօնաւորացն սուրբ Լուսաւորչի բարեխօսութեամբ» (Աղբր. Հանդ., 1911, էջ 94):

Սիմէոնին եւ Երեմիային հետեւելով Կարապետ Դատիկ շինել տուած է ժամատունը, իսկ Կարապետ վարժապետ եպիսկոպոսը Հրեշտակապետաց աւանդատունը: Կարապետ Բաղիշեցի եպիսկոպոսը ԺԲ. դարու կէսին վերանորոգած է գրեթէ ամբողջ շինութիւնը:

Բաղտասար կաթողիկոս կը համակրի Կտուց անապատի եւ անոր կը նուիրէ քարոզազիւք մը եւ յետոյ նոյն անապատի մէջ ալ կը թաղուի՝

«Տապանս այս որ տեսանի ի սմայ կայ պահեստի Պաղտասար կաթողիկոս վերածայնի Յերկրէն գոլով Պաղիշեցի ի մի բերան տուք ողորմի Աստուած ձեզ ողորմեսցի ԹՎ. ՌձՁԵ (1746)»:

(Աղբր. Հանդ., 1911, էջ 94—95):

Կտուցի նուիրուած Քարոզազիւքի մը մէջ գրուած է՝

«Յիշատակ է Քարոզազիւքս Բաղտասար կաթողիկոսին<sup>11</sup> ի դուռն սուրբ Կարապետի անապատին, արդ մի ոք ի խնայեցէ դսա հեռացուցանել ի դրանէ սուրբ Կարապետու եւ ոք հանդիպիք սմայ ընթեռնով կամ բանինչ ի սմանէ շահելով. արդ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԲաղտասար կաթողիկոսն եւ զիւր հանգուցեալ ծնողսն զտէր Բաղդամն եւ զիւր կողակիցն եւ զեղբարքն զտէր Եղիէն եւ զՄելիքն եւ զայլ հին եւ զնոր ննջեցեալսն, որ ետ զայս քարոզիւքս անջինջ յիշատակ ի դուռն Կտուցայ անապատին ի թՎին ՌձՁԶին (1737)»<sup>12</sup> (Ակինեան Հ. Ն.,

<sup>11</sup> Հմտ. Բաղտասարի մասին՝ Հ. Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա 1920, էջ 147:  
<sup>12</sup> 1733ին Կտուցի կը նուիրուի Աւետարան մը (Լաւայեանց, Ցուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 1010):

Հաւաք. Յիշատակարանաց, EriV. 574, Բարոզազիւք Գր. Տաթեւացոյ, Ա. հոր.):

Կարապետ Բաղիշեցի<sup>13</sup> շինարարական գործունէութիւնը կարճաժամ ամփոփուած է սա արձանագրութեան մէջ.

«Արդ ի հայկազեանցս թուի մեծին Եռեակ քառից հարիւրեկին եւ Ռ հնդեակ թիւ աւելին Կանգնեալ յիշատակս տէրունի Բարեխօս տէրն ամենի Վասն երջանիկ հօրն մեծի Տեառն Կարապետ վարդապետի. Սա բնական Բաղիշեցի Քառասներեակ ամ աստ աշխատի Յոլով պարտս անլուելի Սորին ձեռամբն վճարի Այլ եւ արդեամբք զարդարի Ոյք հանդիպիք տուք ողորմին ԹՎ. ՌՄԺԵ (1766)»:

(Աղբր. Հանդ., 1911, էջ 95):

Հաւանօրէն այս Կարապետ վարդապետն է որ Սիմէոն կաթ. ի յանդիմանութեան կ'արժանանայ՝ «զի գրէր նա ոսկեղօծ կնքով եւ դեղեցկերանդ ծաղիօք, անպատկան կոչմանն եւ կրօնին զթուղթս գրէր ամենայն ուրեք» (Դիւան, Գ., էջ 105—106):

Կարապետի ծերութեան օրերուն անոր «վէքիլ» կը տրուի Աստուածատուր վարդապետը, որ 1763ին Լիմի Յակոբ առաջնորդին հետ էջմիածին կ'երթայ եւ հոն Սիմէոն կաթողիկոսին կը յայտնէ իր միաբաններու հպատարակութիւնն ու յարգանքը եւ անկէ կ'ընդունի «զառաջնորդական եւ զժողովարական դունի» (Դիւան, Գ., էջ 22—23): Սոյն Աստուածատուրէն ունինք հետեւեալ կոնդակը. զոր ամբողջութեամբ հրատարակութեան կու տամ.

«Ի սուրբ<sup>14</sup> եւ փառաւորեալ աստուածազարդ եւ մեծապայծառ հրաշալի եւ հրաշալէն Կտուց կոչեցեալ ծովապատ սուրբ անապատիս եւ սուրբ Աստուածածնէ խորանէս եւ սուրբ Կարապետու գերեզմանէս եւ ի ծոց սորին դուամբեալ աղօթական եւ ճգնազգեաց միաբան եղբարցս եւ ի սորին սպասաւոր եւ

<sup>13</sup> Կարապետ վարդապետ Աւետարան մը արձաթագանակ կու տայ եւ Կտուցի կը թողու 1757ին (Լաւայեանց, Ցուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 548):  
<sup>14</sup> Այս կոնդակը՝ է «հանեալ ի դիւանէ Անտոնեանց 1902»: Այժմ կը գտնուի Վիեննական Միթիթաբեանց Մատենադարանի, Թ. 694 Ձեռագրաց սուփի մէջ:

պաշտօնեայ ի Տէր Աստուածատուր մեղապարտ վարդապետէս: Յորոց ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան շնորհք առաքելական եւ աստուածային, բազմապատիկ օրհնութիւն եկեղեցի եւ հանդիցէ ի վերայ Աստուծոյ օրհնեալ եւ աստուածասէր բարեպաշտ սիրելոյդ մերոյ Պարոն Հարապետ Նազար եւ այնոցիկ որք ընդ ձեզ են բնակեալք ինդալ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. ամէն: Շնորհք ընդ քեզ եւ երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ յամենակալէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի սուրբ Հոգոյն եւ յառատածաւալ պարզեատու բարերար մարդասիրէ. ամէն: Եւ ընդ աստուածապարգեւ օրհնութեան եւ շնորհազեղուն գրոյս ծանուցումն լիցի սիրելոյդ մերոյ: Զի ահա առաքեցաք բարեպաշտութեան քում հարազատ որդին մեր զմահտեսի Ստեփաննոս կրօնաւորը, որ է հաւատարիմ եւ երախտաւոր սուրբ անապատիս յազազս սիրոյ սուրբ Աստուածածնին եւ սրբոյն Կարապետին, զի սիրով ընդունիլիք զնա յամենից կողմանց, ինամ, դութ եւ սէր շարժիցիք ի վերայ սուրբ անապատիս, որոց սակս շնորհակալ եմք եւ լինելոց եմք ի բարերարութենէ ձերմէ, զոր ինչ ընդունելութիւն եւ ողորմութիւն արասցես առ Քրիստոս Տէրն մեր վերաբերի, որպէս ասէ ինքն իւր ամէնօրհնեալ բերանովն, որովհետեւ արարիք միում եղբարցս այսոցիկ փոքրկանց ինձ արարիք: Եւ յայլում տեղեղ երանէ զողորմածան ասելով՝ երանի ողորմածաց զի նոքա զողորմութիւն գտին: Ուրեմն սիրելի մի զանդաղիր առնել զողորմութիւն զուարթամիտ յօժարութեամբ, քանզի ամենայն ոք ի մէնջ կամի գտանել զողորմութիւն ի Տեառնէ: Ապա ուրեմն սիրելի, զի յայս սուրբ անապատս որքան սաղմոսերգութիւնք, պաշտօնք եւ պատարազ մատչին ձեր ննջեցելոց հոգուն է, մի հեղգանայք եւ մի յուլանայք հոգալ զհոգիս ձեր եւ զհոգիս ննջեցելոց ձերոց, մանաւանդ արեւակցաց ձերոց, որք ի Քրիստոս ննջեցին եւ սպասեն յօժարակութեան ձերում, օգնել նոցա ի յայսպիսի մեծի հարկաւորութեան, որպէս դուք հոգայք զնոսա, նոյնպէս եւ այլք հոգասցեն զձեզ, նա եւ մեք աղօթող եմք վասն բարի կենաց ձերոց, զի Տէր Յիսուս հասուցէ զամենայն հաւատացեալս ի նաւահանդիսան կենաց անվաղձանից ընդ ամենայն սուրբս առ ի փառաւորել զամենասուրբ Երրորդութիւնն ի յամենայն յաւիտեանս յաւիտենից ամէն: Այսքանս

բաւեացի աստուածասիրութեանը քում, որ-  
պէս ասացաք ի վեր, այսինքն աղօթող եմք  
վասն ձեր:

Գրեցաւ յերկիրն Վասպուրականի առ-  
գոան Կտուցայ սուրբ անապատին ՌՄԺԷ Յու-  
նիսի ԺԴ» (1768):

(Յտեւի կողմը կայ) «Աստուծով հասցէ  
զիրս ի ձեռն բարեպաշտ Ղափանցի պարոն  
Հարապետ Նաղար անբաց ի բարին Ամէնքն:  
Ալիսիօնայ»:

Սկիզբը կայ զարդադիր «Ճ» մը որ կը  
ներկայացնէ հրեշտակ մը ձեռքը Յովհաննու  
Մկրտչի զլուսը, խկ քովը լուսանցքի վրայ  
կնիք մը վրան գրուած. Յիսուսի Քրիստոսի  
ճառայ Աստուածատուր վարդապետ ՌՄ:

Թէ Աստուածատուր իր այս կոնդակով  
ինչ նպատ ընդունեցաւ՝ կը մնայ անձանօթ:  
Իր անթուական տապանագիրն է՝

Սաչս կնքեալ անուամբ Փրկչին  
Մինչ ի գալուստ Տեառն կրկին:

Այս է հանդստարանս Աստուածատուր  
եպիսկոպոսին... սուրբ անապատին» (Աղգր.  
Հանդ., 1911, էջ 98):

1774ին Սիմէոն կաթողիկոս «ձեռնա-  
գրեաց եպիսկոպոս զԱստապատցի Յովհան-  
նէս վարդապետն յառաջնորդութիւն եւ ի  
հայրութիւն սրբոյ Կարապետի անապատին,  
որ Կտուց կոչի» (Արարատ, 1876, էջ 176):  
Չորս տարի վերջ 1788ին «յառաջնորդութեան  
Գասպար վարդապետին Կտուցայ սուրբ ա-  
նապատ»ին կը նուիրուի Աւետարան մը (Լա-  
լայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 764):

Սիմէոն կաթողիկոսի յաջորդը՝ Ղուկաս  
Կտուցի առաջնորդ ու եպիսկոպոս կը կարգէ  
Մարկոս վարդապետը. «Թուղթ առաջնոր-  
դութեան եւ հայրութեան անապատաց. զոր  
ևս Կտուց անապատի առաջնորդ եւ հայր  
Մարկոս վարդապետին. մինչ ըստ խնդրոյ  
նոցին ձեռնադրեաց եպիսկոպոս եւ կարգեաց  
նոցա հայր եւ առաջնորդ» (Դիւան, Դ.,  
էջ 467. հմմտ. եւ էջ 468):

Անձանօթ կը մնայ նաեւ Մարկոս ա-  
ռաջնորդի կատարած գործունէութիւնն ու  
չըջանը: Արդէն 1801ին Կտուցի վանահայր-  
ութեան պաշտօնը կը վարէ Կարապետ վար-  
դապետը, զոր Դաւիթ կաթողիկոս կ'ա-  
նուանէ «բարեշնորհ վարդապետ» (Դիւան,  
Ձ., էջ 131) եւ «հարազատ գաւակ սրբոյ ա-  
թոռոյս հանձարաշատ վարդապետ» (Անդ,  
էջ 132): Կարապետ կը ձեռնարկէ եկեղեցւոյ

բայքայուած քարակերտ դաւիթը նորոգելու՝  
«վիմաքարօք»: Ասոր համար բնականաբար  
վրամ հարկաւոր կ'ըլլայ եւ Կարապետ վա-  
նահայրը Գրիգոր «հանձարունակ, համես-  
տակեաց եւ խոհեմամիտ» վարդապետը<sup>15</sup>  
(Անդ, էջ 131—132) էջմիածին կը զրկէ Դա-  
ւիթ կաթողիկոսէն ժողովարարութեան կոն-  
դակ խնդրելու պաշտօնով:

Կաթողիկոսը յօժարութեամբ կը կա-  
տարէ խնդրուածքը եւ երկու թուղթ կը գրէ  
մին՝ Կտուցի միաբաններու եւ միւսը Կարա-  
պետ առաջնորդի. վերջինս հայրաբար յան-  
դիմանելով որ չէր փութացած իրեն ներ-  
կայանալ, բայց արդարացի կը գտնէ ըրածը,  
քանի որ շինարարութեամբ զբաղած էր<sup>16</sup>  
(Հմմտ. Դիւան, Ձ., էջ 129—133):

Դաւիթ կաթողիկոս ուրիշ թուղթ մըն  
ալ զրկած է Կտուցի անապատականներու ի  
պատասխան անոնց շնորհաւորականին, որով  
անոնք անոր հայրապետական ընտրութեան  
խնդակից կ'ըլլային եւ իրենց որդիական  
հնազանդութիւնը անոր ոտքերու առջեւ դնե-  
լու փութացած էին:

Կաթողիկոսը այն թղթին մէջ սա գովա-  
սանքի խօսքերը կը հիւսէ՝ «Մանուցունի լիցի  
սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց եւ հա-  
րազատ գաւակացդ սրբոյ աթոռոյս ի Կտուց  
կոչեցեալ կղզւոջը ընդ հովանեաւ սուրբ Կա-  
րապետի վանացդ բնակելոց խարաղնագրեաւ  
կրօնաւորացդ միանձանցդ, նախ Կարապետ  
հանձարունակ վարդապետիդ եւ ապա միւ-

<sup>15</sup> Գրիգոր վարդապետէն Կտուցի մէջ կան երկու  
արձանագրութիւն՝ «Են բարեխօս վասն Գրիգոր ճգնա-  
րեր եւ մեծարան վարդապետին համայն ննջեցելոց եւ  
ճնողաց նորին թվին ՌՄՈ (1791)» եւ՝

Ով բառանիչ զէն յաղթութեան  
Ներկեալ արեամբ տըրուտական  
Աթոս փառաց արքայական  
Յորում հանդէի... պնական  
Պատճառ եղեր մեր փրկութեան  
ի յանձնիցն... ազամեան  
Յորժամ ծագի փայլանման  
Լնուս լուսով դերկիր լրման,  
Փառօք կանգնիս եւ Գողգոթան  
Նրկրպագիս յազգէս մարդկան  
Պայճառ ծագես լոյս թո փայլման  
Հողոյ մեղօք մեռեալ բնական  
Գրիգորիս թշվառական  
Հողով թաղձեալ եւ անպիտան  
Որքան մնացաք ի մենաստան  
Հողով եղբայր ամենեքեան  
Որք հանդէպիք սոյն ընթերցման  
Ձիս ընդ նմին առնէք յեջման:  
Անուամբ Մեսրոպ գոռաւոր  
Միայն ձեռով եւ ոչ զործով միայն.  
Թվ. ՌՄՈ (1798):

(Աղգր. Հանդ., 1911, էջ 95—96):

<sup>16</sup> Շինարարութեան գործը կը յանձնուի վարպետ  
Կարապետին (Դիւան, է., էջ 191):

սոց խոհեմամիտ վարդապետաց, պարկեշ-  
տասուն արեղայից... զի բազմակնիք թուղթ  
ձեր ի Յուլիս ամսոյ 28 գրեցեալ ժամանեաց  
սա մեզ, զոր ընթերցեալ զիտացաք զմեծա-  
զոյն սէր եւ զհաւատարմութիւն ձեր...: Այդ  
խնդրեալ էիք զինամս եւ զգթութիւնս ունել  
ի վերայ երկուց սրբոց Անապատացդ, վասն  
որոյ գրեմք զի անտարակոյս կացչիք առ այն,  
զի որպէս հոգեւոր նախանցեալ Հայրապետքն  
մեր՝ զսէր եւ զինամս են ունեցեալ առ ձեզ,  
նոյնպէս եւ մեք ունելոց եմք եւ օժանդակե-  
լոց ձեզ ի հարկնաւորեալ ժամանակին» (Դի-  
ւան, Ձ., էջ 199):

Չէ կարելի ըսել թէ՛ քանի՛ տարի Կա-  
րապետ վանահայրը պաշտօնավարեց եւ բացի  
անապատի նորոգութենէ անոր համար դեռ  
ինչ ըրաւ: Կտուցի մէջ կայ խաչքար մը սա  
գրութեամբ՝ «Սաչս բարեխօս է առ Աստուած  
վասն Կարապետ վարդապետին թվ. ՌՄՀԸ  
(1829): Անկէ յառաջ ուրիշ խաչ մը բարե-  
խօս կանգնուած է՝ Ղաղար վարդապետի հա-  
մար՝ «Սաչս բարեխօս է առ Աստուած վասն  
փրկութեան (հ)ոգոյն Կիւմրեցի Ղաղար  
վարդապետին, միաբան Կտուց սուրբ անա-  
պատիս յամի Տեառն 1813» (Աղգր. Հանդ.,  
1911, էջ 93):

Այս շրջաններու Կտուցի մէջ զբուսած են  
դեռ ուրիշ խաչքարեր ու յիշատակադրեր,  
որոնցմէ յիշենք՝

«Սաչս բարեխօս է առ Աստուած վասն  
Յովանէս վարդապետին թվ. ՌՄԾԲ (1803)»:  
«Սաչս բարեխօս է առ Աստուած վասն  
հոգոյ Սիմէոն եպիսկոպոսին եւ իւր ծնողացն,  
համայն ննջեցելոցն եւ կենդանեաց. ամէն  
թվին ՌՄԿԷ (1818)»:

«Սաչս բարեխօս է առ Աստուած վասն  
հոգոյն Սիմէոն վարդապետին թվ. ՌՄՁԴ  
(1835)»:

«Սաչս բարեխօս է առ Աստուած վասն  
Գարրիէլ վարդապետին եւ իւր ծնողացն  
հօրն Չաքարին եւ մօրն Թուրինչին թվ.  
ՌՄՁԷ (1838)»<sup>17</sup>: — Կտուցի մէջ են նաեւ  
սա տապանագրերը՝

«Այս է տապան Մարտիրոս վարդապե-  
տին թվ. ՌՅԶ (1857)»:

<sup>17</sup> 1841ին Կտուցի մէջ կարճ ժամանակ մը կը  
բնակէ Սրբիման Հայրիկը. հմմտ. Աճձեան Հայկ,  
Հայոց Հայրիկը, թաւրիզ 1929, էջ 133:

<sup>18</sup> 1851ին Աղթամարի կաթողիկոսութեան ընտրե-  
լիներու ցանկին մէջ կայ Յարութիւն եպիսկոպոս վա-  
նահայր Կտուցի: Անոր հետ Աղթամարի կաթողիկո-  
սական աթոռին թեկնածու նշանակուած են Կտուցէն  
դեռ Կարապետ եւ Մարգար եպիսկոպոսները (Բազմա-  
վկ, 1898, էջ 325):

«Այս է տապան Թիւրիսցի Յարութիւն  
ճայրապոյն վարդապետին. Տէր լուսաւորեսցէ  
զհոգի նորին թ. ՌՅԸ (1859)»:

Կարապետ վարդապետէն վերջ Կտուցի  
վանահայրութեան պաշտօնը կը գտնենք Յա-  
կոբ Ծ. վարդապետ Շատախեցիին<sup>19</sup> ձեռքը:  
Նա մանուկ հասակէն աշխարհէ հրաժարելով  
Կտուցի կ'անդամակցի եւ բազմավաստակ  
կեանք մը կը բուրդէ: Նա էր որ Կ. Պոլսոյ  
ազգ. ժողովին կ'առաջարկէր Կտուցի յանձ-  
նել Մատնայ եւ Արջօնից վանքերը (Մասիս,  
1867, թ. 813): Հաւանօրէն ինքն է որ Կտուցի  
մէջ իր ծերունի հօր դամբարանին վրայ այս  
արձանագրութիւնը գրած է՝

«Մկրտիչ Բարուն, արեօք ծաղկելից  
Խաչիւս յայտնի կայ դամբարանին  
Որք հանդիպիք տուք զողորմին  
Հանդեաւ ի Տէր ի Թվին փրկչին 1860 ամին»:  
(Աղգր. Հանդ., 1911, էջ 97):

Մկրտիչ Բարունին մեռնելէն վերջ դեռ  
երկար ատեն կ'ապրի Յակոբ վարդապետ:  
Իր անունն արձանագրուած է խաչքարի մը  
վրայ՝

«Յանցաւոր այս աշխարհի,  
Ես անանցին յոյս եղի  
Չկեանս թողեալ անտի  
Հետեւեցայ Յիսուսի.  
Ի Մանկութեան դալար տի  
Կացի ի յայս սուրբ վայրի  
Վաստակեալս բազմազգի  
Յակոբ Բարուն Շատաղցի  
Որդի Բարուն Մկրտչի  
Արդ որ կանգնիք յիմ անարի  
Տուք զմաղթանս ձեր բարի»:

Իսկ գերեզմանաքարին վրայ կայ՝ «Այս  
է տապան Տէր Յակոբ ճայրապոյն նախկին  
վանահօր Կտուց սուրբ անապատի 1888  
Դեկտ. 2.» (Աղգր. Հանդ., 1911, էջ 97):  
1884ին վանահայրութեան պաշտօնը ար-  
զէն Յովսէփ եպ. Պօստեղեանին<sup>20</sup> վստահա-

<sup>19</sup> Շատախեցի էր նաեւ Կտուցի միաբան Մար-  
գարէ, որուն տապանագիրն է «Յնիկ միաբան սուրբ  
անապատիս Մարգարէի եպիսկոպոսի, որ ի Շատախայ  
եմ երկրեա. եղեալ յայտ նեղ զնոսն» (Աղգր. Հանդ.,  
1911, էջ 98):

<sup>20</sup> Պօղոս վարդապետ, որ ծանօթ է իրրեւ վանի  
առաջնորդ — եպիսկոպոս եւ հակառակորդ Սրբիման  
Հայրիկի, եղած է կարճ ժամանակով մը նաեւ Կտուցի  
առաջնորդ (հմմտ. ԲաՓՓի, Վկպիկներ եւ Պատկեր-  
ներ, Թիֆլիս 1893, էջ 190—191: Սրբիման եւ գործք  
իւր, Հերթունք ամբաստանագրի Պօղոս վրդ. ի, Կ. Պո-  
լիս 1874 եւ Յովսէփ վանահայր Նարեկայ՝ Տեղեկադիր  
աղետալի անցից եւ անկարգութեանց տանն Աղթա-  
մարայ, Կ. Պոլիս 1873, էջ 15):

ցուած էր (Արձագանք, 1884, էջ 103) եւ այն տարին Կոտեց բաւական թւով միաբաններ ունէր<sup>21</sup> (Արեւելք, 1884, թ. 214):

Կոտեցի վերջին շրջանի վանահայրներէն եղած է նաեւ Յովսէփ Եպիսկոպոս Ռչտունի, որուն վերջին տարիները անապատին մէջ դժգոհութիւնն ու անմիաբանութիւնը ծայր կ'առնուն: Ծերութեան<sup>22</sup> պատճառով անոր օգնական կը տրուի իրբեւ փոխ վանահայր Ստեփաննոս Վ. Աղաղատեան, որ անոր հրատարականին ընդունելութենէ յետոյ վանահայր կը կարգուի 1901ին<sup>23</sup> եւ կը մեռնի 1911ին<sup>24</sup>:

<sup>21</sup> Փրկամէջեանի ուղեկիցը Տիրացու Գրիգոր Խաչատրեան ետքէն Կոտեցի միաբան կ'ըլլայ (Նոտարք, էջ 65):

<sup>22</sup> Կոտեցի աղեղարը ննջեցեալներէն մին ալ եղած է Գէորգ Բարուն Տէր Բարսեղեան, որուն դամբանադերը կը փոքէ իր եղբորորդին Մանուկ՝

Ի փրկչական թուականին  
Հաղար եւ ութ հարիւր տասին  
Մենալ ի վան վասպուրական  
Գէորգ Բարուն Տէր Բարսեղեան:  
Լքէ զաշխարհ սին եւ ունայն.  
Գնացեր զհետ Փրկչին կոչման,  
Ձիտէ բարձիր ի յուս մարմնոյդ,  
Գանձեր զգանձ յերկինս յանքոյթ,  
Որով զհանգիստ յաւիտենից  
Տայ բեզ վայելի արքայն երկնից  
Չկեանս լքեալ անցաւորին  
Ի հասակի ութուն ութին:  
Կանգնէ Մանուկ զայս մահարձան  
Եղբորդի քո իսկական  
Նրախոտագէտ սրտիւ համայն  
Ի յիշատակ յաւերժական,  
Որք հանդիպիք սոյն այս շիրմիս  
Որոխտ սրտիւ տուք զողորմին  
Ձեզ ողորմի Յիսուս որդին:

Սոյն Մանուկ խաչքարի մը վրայ սա տողերն եւս կը փորագրէ Կոտեցի միաբանները աչքին առջեւ բերելով.

Ով մենասէր հարք եւ եղբարք  
Գուք որ թողիք աշխարհի փառք  
Ոտնարհ եւ հեղ, ժուժկալ համբեր.  
Լինել բնակ հողւոյն անեղ  
Կացէք արի ուսմամբ գրոց:

Ահա այսպէս առաջինիւ թողին աստիս ելին յերկինս: Փորոզ տապանիս Մանուկ Տէր Բարսեղեան Ռ-ՅԽէ» (1896) (Աղբր. Հանդ., 1911, էջ 97—98): — Կոտեցի ննջեցեալ միաբաններու մէջ կարելի է անտեսել Գրիգոր Մրջիւնյարոյց վարդապետը, որ զաւագան ու կոնդակ ձեռքին մէջ անապատին համար առնաւ նուէրներ հաւաքած է այլ եւ այլ տեղեր շրջելով:

<sup>23</sup> 1900ին Պոլսոյ կրօնական ժողովը նաեւ նկատողութեան կ'առնու Ստեփան խաչատրեանի Կոտեց անապատի առաջնորդ ըլլալու հարցը (Բիւզանդիոն, 1900, թ. 1120):

<sup>24</sup> Հմմտ. Բիւզանդիոն, 1901, թ. 1416 եւ 1599 եւ Արեւելք, 1901, թ. 4785 ու 4794, Արարատ, 1911, էջ 884: 1911ին Կոտեց ունէր վանահայր Եպիսկոպոս մը եւ երկու վարդապետ. Հմմտ. Բիւզանդիոն, 1911, թ. 4369: Համեմատական պատերազմի ընթացքին Կոտեց հայկական միւս անապատներու եւ վանքերու դժբախտ վիճակին հասաւ:

5. ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոտեց անապատը որքան կ'երեւայ Լիմի չափ բազմանդամ միաբանութիւն չէ ունեցած: Սակայն այնքան ալ սակաւաթիւ չէ եղած իր միաբաններու թիւը: Դարձեալ Կոտեցի միաբաններ չեն ունեցած գրական ու ժողովրդական այն լայն ու ցայտուն գործունէութիւնը. զոր ունեցած են Լիմի անդամները, սակայն եւ այնպէս իրենց անբարձր վարքովն ու կենցաղովը Հայ ժողովուրդին համակրանքին արժանացած եւ անկէ նպաստ ու օգնութիւն ստացած: Կոտեցի թեմ կը կազմէին Մարմէտ, Խալկենց, Ամենաշատ, Եկմալ, Ճիրաչէն, Ալիւր, Դուլաչէն եւ Աննավանք (Արձագանք, 1882, էջ 313): Բաց աստի իր շուրջն ունէր 1500—2000 օրավար հող, Աւանցի մէջ 40 ճաշկ ջուր եւ ծառատան. Վանի մէջ տներ ու խանութներ, ինչպէս եւ Էտիւրնէի, Ռոտոսթոյի եւ Թիֆլիզի մէջ (Աշխատանք, 1911, էջ 734—735. Փորձ, 1879, IV, էջ 62. Աղբր. Հանդ., 1911, էջ 93 եւ Աղատամարտ, 1910, թ. 369):

Իսկ դրամական եւ նիւթական ուրիշ այլ եւ այլ նպաստներ ստացած է վանքին տօնին առթիւ, որ ժամանակ այրերով կը լեցուէին կղզին ու եկեղեցին, վասն զի կիներու բացարձակ արգելք կար այնտեղ մտնելու: Նաեւ շատ մը նուէրներ կու գային, երբ ժողովարար վարդապետները գերդէ գիւղ ու քաղաքէ քաղաք կը շրջէին հաւատացեալներէ օգնութիւն խնդրելու համար<sup>25</sup>: Հաւաքուած դուրաններովն ու նպաստներովը կը հոգացուէին արդէն քիչով գոհ եղող միաբաններու պէտքերը, կը նորոգուէին շէնքերը եւ կը վճարուէին տուրքերը (Հմմտ. Լիմ) եւ թաւանումներով պակասները կրկին կը ճարուէին<sup>26</sup>:

Կոտեց անապատը (ժամանակ մը Աղթամարի եւ ապա) էջմիածնի կաթողիկոսութեան ենթարկուած է եւ անկէ ստացած է հրահանգ ու կոնդակ: Իրբեւ քոյր կամ դուստր միաբանութիւն Լիմի՝ անոր հետ լաւ յարաբերութիւններ մշակած:

<sup>25</sup> Լուրով անցեալը՝ վերջին մէկ դարու մէջ քանի մը անգամ Կոտեց Գիւրաբերու յափշտակութիւններու եւ կողոպտուի կ'ենթարկուի (Հմմտ. Շէրենց, Սրբավայրեր, էջ 73):

<sup>26</sup> Բարեղ վարդապետ Սեւեկ 1765ին կ'ամբաստանէ Կարնեցի Սարգիս վարդապետը թէ՛ Կոտեց անապատի համար հաւաքած դրամներն իւրացուցած է (Աղանունի Մկ. եպ., Միաբանք եւ այցելուք հայ երուսաղէմի, էջ 51):

Կոտեցի միաբանները նուիրուած են նկատողական կեանքի եւ իրենց անձին սրբացումին. իրենց օրն ու գիշերը զոհաբերած են Աստուծոյ եւ երկարատեւ աղօթքներով երկնի ողորմութիւնն ու շնորհքը խնդրած իրենց եւ մարդկային ազգի համար: Գիտութեան շատ քիչ փոյթ տարած են եւ շատ քիչերն իրենց մտքի ցրումը վնասած են Ձեռագիրներ գրելով<sup>27</sup>: Աշխարհէ հրաժարած՝ չեն ուղած աշխարհով զբաղիլ: Մեռուցած են իրենց մարմինն ու անոր զգայարանքները: Պահած են խիստ ու երկարատեւ պահքեր. միս գրեթէ չեն ճաշակած եւ իւր՝ շարաթը մէկ երկու անգամ<sup>28</sup>: Ժամասացութիւնները կը կատարուէին անխափան եւ ամբողջապէս: Իգական սեռին արգելուած էր մուտքը Կոտեց անապատի մէջ<sup>29</sup>:

Իրբեւ վերջաբան կը յաւելում՝

Վիեննայի մեր Մատենադարանին թ. 14 Ձեռագրին մէջ, որ ժողովածոյ մըն է, թղ. 36—40ր կայ գրութիւն մը «Դրութիւն գրուածման բանից դոյլականաց առ հրեղինակիր անապատն Կոտեց եւ առ ի նմարնակեալ խարաղնաղեցիկ միանձանցն ջոկս աստուածագումար Հարց» (Տաշեան, Յուց. հայ. Ձեռ. Մխիթ. ի Վիեննա, էջ 118—119): Այս գրութիւնը, որուն հեղինակը կամ ապատականներէն է եւ կամ անապատին համակիրներէն մէկը (գուցէ Լիմի միաբան), դովեստի ու գրուատիքներու գեղեցկահաս պսակ մըն է, զոր կը գետեղէ միանձներու գլուխներուն վրայ եւ անապատը կը տեսնէ զրախտավայր մը, մանաւանդ թէ երկրաւոր արքայութիւն մը, ուր միաբանները՝ մարմնաւոր հրեշտակներ՝ հոգեղէն հրեշտակներու երգովն ու օրհնութիւններով զԱստուած կը փառաբանեն եւ անոր տեսութեան ի խընդիր իրբեւ խունկեր կը սպառին<sup>30</sup>:

<sup>27</sup> Վերջին դարուս ունեցած են փոքրիկ դպրոց մը: <sup>28</sup> «1890ական թուականներին Կոտեց անապատում Յովհաննէս Մաթակունին ամբողջ օրը ճգնութեան եւ աղօթքի մէջ անցկացնելուց յետ՝ ցանկացել է փշեպ պսակով պսակուել, վերցնել է մի շորի վրայ փշեր շարել, դրել գլխին եւ յանկարծ քաշել, որից ուշագնաց է եղել» (Աղբր. Հանդ., 1912, էջ 87): Մատակունին աշակերտած է Ղեւոնդ վարդապետ Բարսեղեանի օր երկար ատեն Նախավայրի (Դարաշամբ) վանահայր կ'ըլլայ (Յառաջ, 1939, թ. 3977): <sup>29</sup> Շէրենց, Սրբավայրեր, էջ 73, Աղբր. Հանդ., 1912, էջ 87, Սարգիսեան Չ. Ն., Տեղագրութիւնք, էջ 278, Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 155, նոյն Ստորագրութիւն, էջ 227, Գեղունի, 1905, էջ 69, Էփրեկեան, Բնաչ. բառարան, Բ., էջ 100, Արձագանք, 1882, էջ 312—313, Բաֆֆի, Կայծեր, Ա. հատոր, էջ 173—215, Հմմտ. նաեւ Լիմի մասին գրածներս: <sup>30</sup> Համանման գրութիւններ, գուցէ եւ նոյնը, կան նաեւ վենետիկ, Հմմտ. Գեղունի, 1905, էջ 63—64:

Սոյն գրութիւնը կը սկսի այսպէս՝ «Ի յերկրի երկին վեհագոյն կայանց իննեակ երանութեան հրեշտակացելոցն մարմնով, մաքուր կրօնաւորաց հանգիստ Երրորդութեան տեղիդ հրեշտակեալ հազարն Աստուծոյ սոկեապարիսպ եւ բիւրեղաչէն խորան հրաշապան: Փառանցն վայելչութեան նախնոյն կորուսման առ ի յանդր քան զընութիւն ի վեր ամբարձման...: Գետոցն աստուածայնոց յորդառատ զնացիւք խրախտախրոտ քաղաքը բազմաժողով անթաղուատ բազմեալ առ բարձու լերին կղզւոյդ ծովամիջի սուրբ եւ սքանչելի անապատդ Կոտեց»:

Հեղինակը շատ ոգեւորուած կը տողէ իր գրուատիքը եւ երբեմն արձակը ձգելով ոտանաւորի կը սկսի: Կ'արժէ այս գրութիւնը օր մը հրատարակութեան յանձնել:

Գ.

ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱՇ ՎԱՆՔԸ

1. ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶԻՆ

Վասպուրականի բնակչութեան սրտածիզ վայրն եղած է Աղթամար կղզին, վասն զի հոն հաստատուած էր նոյն աշխարհի կաթողիկոսարանն իր Ս. Խաչ վանքովը:

Աղթամար շատ ապառաժուտ կղզի է եւ զուրկ բուսականութենէ<sup>1</sup>, սակայն Վանայ լճի մակերեսէն քանի մը հարիւր ոտանշափ բարձր ըլլալով՝ ամառ ատեն զով օգ ունի եւ կը փնտուռի իրբեւ օդափոխութեան հաճելի վայր<sup>2</sup> (Արձագանք, 1882, էջ 313):

Հաւանօրէն Աղթամար հին դարերուն ցամաքի հետ միացած էր (Մուրճ, 1902, էջ 181—187) ու ետքէն բաժնուած եւ ջրերու հարուածներու եւ լափումներու հետեւանքով նոյն իսկ պղտիկցած (Բիւզանդիոն, 1901, թ. 1505):

Աղթամարի անունը դեռ կարելի է հեղած ձգել ստուգարանել: Ոմանք զայն կը մեկնեն «յաղթուած կամ յաղթող Մարաց», ուրիշներն Աղ կամ Ախլ՝ ժողովուրդ, թամար՝ դառնութիւն = ժողովուրդ դառնութեան» (Բազմավէպ, 1897, էջ 150—152): Իսկ Վաս-

<sup>1</sup> Աղթամար ալ ունի բուսական նշաններ (Բիւզանդիոն, 1901, թ. 1507):

<sup>2</sup> Աղթամարի բնակիչները հին ատենները անձրեւային ջրով շատացած են. յետոյ Խաչատուր կաթողիկոսը բարեհամ ջրոյ հոր մը բացած է (Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 277): Վերջին ժամանակներս խմելու ջուրը Ախալանքէն կը տարուէր:

պուրականի ժողովուրդն իր պարզութեամբը եւ բանաստեղծական աւելնովը կ'երգէ սէրը զոյգի մը եւ կ'ողբայ մահը զժբարտներու: Այս անանուն կողմին վրայ Թամար անունով գեղեցիկ աղջիկ մը կ'ապրէր: Նա սիրահարուած էր Վաչիկ (Ռչտունի) ազնուականին, որ ամէն գիշեր լողալով անոր այցելութեան կու գար ու կ'երթար:

Փոթորկալից գիշեր մը Վաչիկ կրկին ծով կը նետուի Թամարին երթալու համար, սակայն յուզուած ալիքները կը ձգտին խափանել անոր սիրոյ ճամբան: Նա ամէն ճիգ կը թափէ կողին հասնելու համար, սակայն անկարող կ'ըլլայ եւ «Ախ Թամար, Թամար» հեծեծելով իր վերջին շունչը կու տայ: Անդիէն՝ կողեակին վրայէն սիրատենչիկ աղջիկը այս տխուր պատկերին սրտի դառն ցաւով ակնատես կ'ըլլայ եւ ինքն ալ այս ու վախով կը մեռնի: Այդ տխուր արկածէն ի վեր կողին Աղթամար կը կոչուի (Արաքս, 1898, էջ 71—72, Բաղմովէպ, 1897, էջ 150—152):

Գարեբ յառաջ այս կողին Ռչտունիներու կը վերաբերէր: Հոն Բարդաբիրան Ռչտունին Հրեաներ կը բնակեցնէ, իսկ Թէոդորոս Ռչտունին է. դարուն զայն բերդերով եւ պարսպներով կ'ամրացնէ: Հ. Չամչեան (Պոմ. Հայոց Բ., էջ 355) կը գրէ՝ «Սա (Թէոդորոս) ըստ գրեւոյ Ասողկայ եւ Վարդանայ... շինեաց վանս ի նմա», մինչ Հ. Էփրիկեան (Բաղմովէպ, 1897, էջ 155) ասոր հակառակ կ'արտայայտուի ըսելով «Թէոդորոս Ռչտունուց կողուոյ վրայ վանք շինելու յիշատակութիւն չկայ Ասողիկի եւ Վարդանայ մօտ» եւ այնպէս կը համարի թէ «վանք» պէտք է բնակարան իմաստով առնուլ (անդ, էջ 156—157): Գարձեալ նոյն Հայրը կը հակառակի Saint-Martinի (Mémoires historiques... I, էջ 140) որ կ'ըսէ թէ՝ 653ին Թէոդորոս Աղթամարի վրայ վանք մը շինած ըլլայ: Սակայն Սամուէլ Անեցիի այն արտայայտութենէն թէ «Ի Տէր Եղիայէն էառ զԱղթամար Գագիկ եւ ետ նմա զԻրի» Հ. Էփրիկեան կը խորհի թէ Գագիկէն յառաջ Աղթամարի մէջ «մենաստան մը սկսեր է լինել» (Անդ էջ 156): Իսկ Գագիկ Արծրունի կողին ամրացնելէ եւ զայն զանազան շինութիւններով օժտելէ յետոյ կը սկսի Ս. Սաչ վանքի եւ եկեղեցւոյ շինութիւնը — 915ին:

2. ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղթամարի Ս. Սաչ վանքը կամ պարզապէս Աղթամարի վանքը<sup>3</sup> ունի Ս. Սաչ անուն եկեղեցի մը, ժամատուն մը, զանգակատուն մը, միաբաններու բնակարաններ եւ կաթողիկոսարան մը:

Ս. Սաչ եկեղեցին շինուած է սրբատաշ կարմիր քարերով, որոնք բերուած են Կոտոմ գիւղէն: Սաչաձեւ է եւ անսիւն. պսակուած տասնուվեց կողմանի գմբէթով եւ կոնաձեւ կաթողիկէով: Այս եկեղեցւոյ առանձնայատկութիւնը անոր մէջ կը կայանայ, որ չորս պատերն իրարու հետ ուղղակի չեն միանար, այլ մէկական մետրաչափ հեռու կը մնան եւ հնգանկիւնանի աշտարակաձեւ ուրիշ պատով մը իրարու կը կցուին յառաջ բերելով (ներքուստ) կիսաբոլոր խորշեր: Նմանապէս եկեղեցւոյ խաչի ձեւ տալու համար հարաւային եւ հիւսիսային պատերն երկու կողմէ թեքուածներ ունին: Արեւելեան եւ արեւմտեան թեքերը կողքերու թեքերէն աւելի երկար են:

Արեւելեան եւ արեւմտեան պատերու մէջ կան երկական կամարակապ ներսանկուածներ, արեւելեանն երեքական, իսկ արեւմտեանը միայն մէկական եռանկիւնաձեւ որմնասիւններով զարդարուած: Իւրաքանչիւր պատի մէջ տեղը՝ կայ երկար եւ նեղ պատուհան մը: Այս չորս պատուհաններէ զատ շինուած են դեռ 12 պատուհաններ:

Եկեղեցւոյն վերին եզրները պատուած են քիւով, որուն տակ զանազան կենդանիներու փոքրիկ բարձրաքանդակներ կան: Ապա՝ մետր մը ցած, եկեղեցւոյ շուրջը կը բոլորուի երիզ մը՝ բաղկացած գլխաւորաբար խաղողի ողկոյղներու եւ զանազան տեսարաններու քանդակներէ: Ասկէ ալ վար, պատին գրեթէ մէջ տեղէն ամբողջ եկեղեցւոյ շուրջը ցցուած են այլ եւ այլ կենդանիներու կիսարձաններ: Ապա կու գայ ուրիշ երիզ մը եւ այս ու նախորդ երիզին միջեւ կան Հին եւ Նոր Կտակարաններու սուրբերու բաղմաթիւ

<sup>3</sup> Մարգարեանի 1901ին Արեւելքի մէջ (Թ. 4737) կը գրէր «Աղթամար ասիական թուրքոյ մէջ Ալաշ-կերտի սուրբ Յովհաննու վանքէն յետոյ ամենանշանաւոր վանքն է իր ճարտարապետական ներդաշնակ ոճին եւ նշանակալիցութեանը պատճառաւ». հմտ. ճարտարապետական արուեստի տեսակետով Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, էջ 82—83, 289, 578 եւն. Bachmann, Kirchen und Moscheen in Armenien, էջ 40. Աղթամարի մասին տեսնել դեռ Rohrbach, Vom Kaukasus bis zum Mittelmeer, էջ 70—73. Linch, Armenia, էջ 126—136. Բիւզանդիոն, 1903, Թ. 5388 եւն եւն:

բարձրաքանդակներ եւ տեսարաններ անոնց կեանքէն:

Եկեղեցւոյն չորս ճակատն ալ զարդարուած են աւետարանիչներու մարդաչափ բարձրաքանդակներով:

Ինչպէս ըսուեցաւ, եկեղեցին անսիւն է եւ խաչաձեւ: Կողակը բոլորաձեւ է եւ կամարակապ եւ մէջ տեղը երկնիկի ու նեղիկի պատուհան մը ունի: Սեղանը օժտուած է սիրուն խաչկալով մը, որուն վրայ կայ՝ «Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյ Տեառն Գրիգորի կաթողիկոսի, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի կառուցի խաչկալս արդեամբք Աղթամարայ մեծի եւ փոքու եւ Բաղազանից ոսկերչոնց եւ աշխատութեամբ եւ մասնակցութեամբ Տեառն Սահակայ վարդապետի Սարգիսեցւոյ, որք պատահէք լի բերանով Աստուած ողորմի ասացէք նոցա թվով Հայոց ՌՄԵ (1756) ամէն»:

Սեղանին երկու կողմերը կան մէկական խորաններ, որոնց դռները եկեղեցւոյ անկիւններու մէջ բոլորուող խորշերու մէջ կը բացուին: Խորանները (մատուռներն) ունին մէկ մէկ սեղան, վէմքար եւ պատուհան: Եկեղեցւոյ հարաւային կողմը, բոլորաձեւ թեւի մէջ, կայ դուռ մը, որուն վերեւ շինուած է վերնայարկ մը — յատկապէս Գագիկ թագաւորի եւ արքունական ընտանիքի համար: Այս ալ կիսաբոլոր է ու կամարակապ եւ առջեւն ունի մետր մը բարձր պատ մը կամարակապ հինգ բացուածքներով, զարդարուած նուրի քանդակներով եւ եզի, խոյի, վագրի, այծի, փղի ու հորթի կիսարձաններով: Կամարներուն վրայ նկարուած են (իւղաներկ) Աւետման, Այցելութեան եւ Ծննդեան պատկերները: Եկեղեցւոյ ներսն ալ զարդարուած է իւղաներկ պատկերներով<sup>4</sup>, որոնցմէ մաս մը եղծուած է եւ Սաչատուր կաթողիկոսը կողակն ամբողջապէս կապոյտներով տուած է — միայն քանի մը պատկերի խնայելով:

Եկեղեցւոյ արեւմտեան կողմը, հիւսիսային խորշի մերձ, դրուած է կաթողիկոսական աթոռը:

Եկեղեցին ունի երեք դուռ եւ 16 պատուհան (ութ հատ ալ դաւթին մէջ կը բացուին): Արեւմտեան դրան ճակտին վրայ դրոշմուած

<sup>4</sup> Մկոն (հմտ. Արձագանք, 1882, էջ 314) կ'արտայայտուի «Թէեւ պատմաբանը (Թ. Արծրունի) հիացած է այդ պատկերների վերայ, բայց դոքա այժմ չէ թէ բաւականութեամբ չեն կարող տալ մեր ճաշակին, սլլ եւ զուրկ են ամէն գեղարուեստական պահանջից»:

է «Շնորհօքն Գրիստոսի շինեցաւ դաւթիս ի թվին ՌՄԾԲ (1803) արդեամբ Թումա կաթողիկոսին եւ ձեռամբ Ոստնեցի ուստա Նախապետին ու ոչս Թաթոսին, որք կարգայք, տուք զողորմին»: Հ. Ն. Ակինեան ճշգրտորէն կը սրբագրէ «ՌՄԾԲ» (1763) հմտ. Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա 1920, էջ 158):

Եկեղեցին հարուստ է բարձրաքանդակներով, որոնց մէջէն ամէնէն նշանաւորներն են Գագիկ Արծրունիի բարձրաքանդակն եկեղեցւոյ արեւմտեան պատի վրայ եւ Սահակ ու Համազասպ Արծրունիներունը հարաւային պատին վրայ: Սոյն բարձրաքանդակներու եւ ուրիշ քանդակներու, ինչպէս եւ եկեղեցւոյ ընդարձակ նկարազրուութիւնն ըրած է Ն. Լալայեանց Ազգաբարկան Հանդէսի մէջ (հմտ. 1910, էջ 197—212, հմտ. նաեւ Արաքս, 1898, էջ 74—75): Թոյլ կու տամ ինձ այս տեղ յառաջ բերելու Լալայեանցի բարձրաքանդակներու եւ քանդակներու նկարազրուութեան մաս մը — անոնց մասին զազափար կազմելու համար: Կը գրէ՝

«Ինչպէս ասացինք, ամբողջ եկեղեցին ծածկուած է բարձրաքանդակներով, բաւական նուրբ, սակայն երբէք չեն կարող համարուել Անիի քանդակների հետ, նկատելի է նաեւ, որ թէ մարդկանց եւ թէ կենդանիների մարմնի մասերի համաչափութիւնը կատարելապէս պահպանուած չէ: Լինչի կարծիքով այս քանդակները կարող են մի նշանաւոր օղակ կազմել ասորական արուեստի եւ արաբական ու բիւզանդական արուեստների միջեւ:

Պատմական տեսակէտից ամենանշանաւոր քանդակը եկեղեցու հիմնադիր Արծրունու բարձրաքանդակն է, որ կերտուած է եկեղեցու արեւմտեան պատի վրայ: Գագիկը քանդակուած է ամբողջ դիրքով, մօտ 1½ մետր բարձրութեան, ձախ ձեռին բռնած այս եկեղեցու մանրաքանդակը, որը ցոյց է տալիս աջ ցուցամատով: Սրա առջեւ երկու հրեշտակ բռնած են մի խաչ՝ շրջանակի մէջ դրուած: Գագիկ հանդէպ կանգնած է Յիսուս, այն դիրքով, որ կարծես օրհնում է Գագիկին: Յիսուսի ձախ ձեռքում կայ մի գիրք, որի վրայ գրուած է. Ես եմ լոյս աշխարհի: Գագիկի եւ Յիսուսի կողքերին մի մի վեցթեւեան հրեշտակ:

Գագիկի վրին կայ ականակուռ թաղ՝ լուսապսակով պատած, ուսերին ձգուած է մի

վերարկու, ամբողջովին նշխերով պատած, որոնց մէջ նկատելի են թռչուններ. մի դեղեցիկ ճարմանդով վերարկուն ճարմանդուած է կրծոսկրի մօտ, վերարկուի տակից հազած է մինչեւ դօտկատեղին հասնող թեւաւոր շոր, գլխաւորապէս պարուրածեւ նշխերով: Ինձ թուում է, որ այդ շորի կուրծքը եռանկիւնաձեւ բացուած է, եւ տակից երեւացող նոյնպէս պարուրածեւ նշխերով հանդերձը շապիկն է, որի նմանը այժմ եւս գործ է ածուում այս կողմերում: Շալուարը միանգամայն նման է մեր նկարագրած տեղական, շալուարին, միայն ո՛չ թէ փողկի մի, այլ երկու կողմից ունի ասեղնադործ, լայն երկզ: Սրա երկզը պատած է երկու շարք պարուրածեւ նշխերով:

Գազկի երկրորդ բարձրաքանդակը գլուխում է արեւելեան պատի վրայ, խաղողի այգի ներկայացնող երկզի մէջ. — Գազկի թագաւորը ծայրագատիկ նստած է բարձի վրայ, աջ ձեռնի ունի մի բաժակ, իսկ ձախ ձեռքը ձգել է խաղողի մի ողկոյղի: Գազկի երկու կողմում կան մի մի մանկուակ, որոնցից մինը նուս է քաղում, իսկ միւսը խաղող:

Պատմական նշանակութիւն ունեցող երկու բարձրաքանդակ էլ կան հարաւային պատի աջ կողմը. — Սա ներկայացնում է մի ամբողջ տեսարան. — Երկու արջ միմեանց հետ կուռում են, սրանց թաթերի ներքեւ գտնուում են երկու քոթոթ: Արջերի վերեւ կայ մի թեւաւոր առիւծ՝ թռչունի գլխով, իսկ սրանից բարձր, շրջանակի մէջ մի սրբի կիսարձանի երկու կողմը կան մի ամբողջապէս բարձրաքանդակ, լուսապսակ գլխներով եւ Փարաջանման հանդերձներով, որոնցից մինը պարզել է ձեռքերը այնպէս, որ կարծես խաչակնքում է: (Տես բնագրի միջի պատկերը:) Առաջնի գլխի մօտ գրուած է. Սր. Համազասպ Վասպուրականի իշխան, իսկ միւսի, խաչակնքողի, նոյնպէս գլխի մօտ՝ Տէր Սր. Սահակ եղբայր Համազասպայ, մարտիրոսք եւ վկայք Քրիստոսի: Սրանց հանդէպ քանդակուած է մի արծիւ, որ իւր մագլաններով մէջ առած է մի աղանի. սրանից էլ վերեւ կայ գառնապուխ, թեւաւոր մի թռչուն, բարձրում մի սրբի պատկեր, շրջանակի մէջ:

Այժմ սկսենք նկարագրել միւս բարձրաքանդակները՝ սկսելով բարձրից:

Եկեղեցու քիւի տակ փոքրիկ դիրքով քանդակուած են մի շուն, որ հալածում է մի

նապաստակի, մի ուրիշ շուն, որ ընկած է մի այծեամի հետեւից. մի յովազ, որ պատուոտում է մի եղնիկ, երկու աղանիներ կտուց կտցի են տուած, մի որսորդ, որ բռնած է որսած ցլի վզակապից, չորս ոչխար նստած եւ երկու առիւծ կանգնած: 10 մարդկային դուլիս եւ մի առիւծ (հիւսիսային պատի ձախ կողմը), մի առիւծ, 12 մարդկային դուլիսներ, մի նապաստակ, մի առիւծ, դարձեալ մի նապաստակ, մի թռչուն, մի առիւծ, դարձեալ երկու նապաստակ, երկու թռչուն կտուց կտցի տուած, ինչպէս նաեւ երկու աղանի նոյն դիրքով, միայն սրանց մէջ մի օձ, (որ եկել է թունաւորելու սրանց սիրային երջանկութիւնը), մի աղանու տակ էլ երկու ձու, մի թռչունի բուն, մէջը մի ձու. մի ցուլ, մի յովազ, երկու աքաղաղ կուռելիս, մի առիւծ, մի դառ, մի եղջերու, մի խոզ:

Վերեւի երկզը, որ կարծես ներկայացնում է խաղողի այգի, մեծ մասամբ ողկոյղներից բաղկացած լինելով, ունի մի շարք շատ հետաքրքրական տեսարաններ. այսպէս՝ եթէ դիտելու լինենք արեւելեան կողմից, Գազկի բարձրաքանդակի ձախ կողմից, կը տեսնենք.

Մի մարդ բռնել է փախչող նապաստակի սոյնից, մի ձիաւոր նետ է արձակում մի արջի վրայ, որ արդէն իւր առաջի թաթերը ձգել է սրա նստած ձիու դամակին, մի մարդ մէջքին մի կողով, եւ ձեռքին մի դամբիւղ, մի մարդ, որ դաշոյնը խրել է մի արջի կողք, մի թռչուն, որ խաղող է ուտում (հիւսիսային պատի վրայ). մի այգեպան, որ ձեռնի բահ բռնած՝ այգին է ջրում, երկու երիտասարդ կուռում են միմեանց հետ, մի երիտասարդ պարսատիկով խիւում է խաղող ուտող թռչունին, մի նստած գառ, որ մուռթը պարզել է դէպի ողկոյղը, երկու բաղ, երկու ուլ, մէկ ինձ, մի թռչուն եւ մի ձագար միմեանց մօտ կանգնած են. մի կին, որ հաց է տանում այգին ջրող մի ուրիշ այգեպանի, մի որսորդ իւր որսորդական շան եւ բազէի հետ, որ ուզում է որսալ թփերի միջի արջն ու վաբաղը: Արեւմտեան պատի վրայ. մի այծ իւր ուլիկի հետ, մի արջ, որի մի քոթոթը ծիծ է ուտում, իսկ միւսը բարձրացել է մէջքին, մի մարդ՝ ձեռնի ձմերուկ, մի մարդ եւ մի արջ միմեանց հետ կուռելիս, իսկ մի ուրիշ մարդ ծառը բարձրացած, երկու խոյ կուռե-

լիս, մի որսորդ խիւում է արդէն նետահար եղած արջի...:

Այժմ անցնենք միւս բարձրաքանդակներին, որոնց մեծագոյն մասը կրօնական է.

Արեւելեան պատի դրեթէ կենդրոնում, ներսանկուածների վերեւ բոլորող կամարների միացման տեղում մի շրջանակի մէջ քանդակուած է Ադամը՝ մատը պարզած դիրքով, եւ սրա երկու կողմում գրուած է. «Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց եւ վաղանաց» եւ կարծես իբր բացատրութիւն այս խօսքերի՝ Ադամի երկու կողմը քանդակուած են «ամենայն անասունք եւ վաղանք» եւ սրանք այնքան շատ են, որ մի շարքով շարուած են եկեղեցու չորս պատի վրայ էլ: Արանցից շատ շատերը ոչ թէ՛ բարձրաքանդակ, այլ կիսարձաններ են, մօտ կէս մետրաչափ դուրս ցցուած պատից: Եթէ սկսենք դիտել Ադամի ձախ կողմից՝ կը նկատենք. — առիւծ, դայլ, արջ, ընձուխտ, վայրի ցուլ, դայլ, եղ. եղնիկ, խոյ, ոչխար, դոմէշ, ձի, ջորի, ուղտ, հնդկահաւ, բազէ, արծիւ, սիրամարդ, փասիան եւ այլն: ...

Հիւսիսային պատի լուսամտի աջ կողմում քանդակուած է կենաց ծառը, որի բնին փաթաթուած է դազանի թաթերով օժտուած օձը, եւ խօսում է իւր առջեւ շրջած Եւայի հետ: Մի քիչ հեռու, լուսամտի ձախ կողմում քանդակուած են Ադամի եւ Եւայի՝ մօտ մէկ ու կէս մետրաչափ բարձրաքանդակները, կենաց ծառի երկու կողմը կանգնած: Եւան ուտում է բարւոյ եւ շարի դիտութեան խնձորը եւ յորդորում Ադամին՝ իւր օրինակին հետեւելու:

Նոյն պատի վրայ կայ նաեւ Սամսոնի երկու մետր բարձրութեան բարձրաքանդակը, աջ ձեռում բռնած փղշտացու դուլիսը՝ մաղերից: Սրա մօտ Եգեկիէլ մարգարէն, որի աջ կողմից մի ուրիշը, իսկ բարձր, շրջանակների մէջ երեք կիսարձաններ: Փոքր ինչ հեռու դարձեալ Սամսոնը, որ սուրն առիւծի երախն է խրում, սրանից վերեւ երկու աքաղաղ կուռում են, իսկ ներքեւ կանգնած է մի մարդապուխ, թեւաւոր թռչուն:

Հիւսիսային պատի աջ կողմում Ամովս մարդարէի, Ս. Կիրակոսի եւ մի այլ սրբի կիսարձաններ շրջանակներով, որոնց ներքեւ Ս. Թէոդորոս, Ս. Սարգիս եւ Ս. Գեորգ, երեքն էլ ձիաւոր, առաջինն սպանում է մի վիշապ, երկրորդը՝ մի յովազ, իսկ երրորդը՝ ձեռներն ու ոտները կապուած մի մարդ: ...

Արեւելեան պատի երկու ներսանկուածների միջեւ բացող պատուհանի գլխին բոլորում է ողկոյղի քանդակներից բաղկացած մի կիսարտոր կամար, իսկ աջ ու ձախ կողմերին մի մի սրբի, թեւեւ թաղէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների բարձրաքանդակ: Սրանից ներքեւ մի առիւծ, մի յովազ եւ մի եղնիկ: Սրանցից աջ, մի կլոր շրջանակի մէջ քանդակուած է մի կիսարձան, աջ կողմում Յովհաննէս Մկրտչի, ձախում Ս. Գրիգոր Լուսաւորչի բարձրաքանդակները, իսկ սրանց ոտների մօտ մի առիւծ»:

Եկեղեցւոյ դմբէթը տասնուվեց անկիւնով է եւ ունի ութը պատուհան, որոնց վրայ կը բոլորուին ծաղիկներու եւ կաքաւներու քանդակներով գեղազարդարուած կամարներ:

Եկեղեցւոյ երկարութիւնն է 15.40 մետր, լայնութիւնը՝ 12.60 մետր, բարձրութիւնը գրեթէ 20 մետր:

Չանդակատունը հարաւային դրան առջեւ կը գտնուի: Չորս քառակուսի սիւներու վրայ կը բոլորուին պայտածեւ կամարներ եւ ասոնց վրայ կրկին քառակուսի սիւներ եւ ասոնց վրայ ալ պայտածեւ կամարներ: Ասոնց վրայ կը հանդէին վեց կլոր սիւներ կրելով վեցանկիւնի գմբէթ մը, որմէ կախուած են զոյգ գանդակներ: Չանդակատան վրայ արձանագրուած է՝ «Շինեցաւ գանդակատունս արդեամբք աստուածասէր իշխանացն Ախիշան եւ Գեորգ աղայիցն յանուն սուրբ Համբարձման ի յիշատակ ննջեցելոցն եւ կենդանացն»:

Գաւիթը հասարակ չէնք մըն է եւ ունի երկու պարզ դուռ եւ ինը պատուհան: Հարաւային դրան վրայ գրուած է «Ի ՌՄԺԲ (1763) եւ շնորհօքն Քրիստոսի շինեցաւ դարպաս ձեռամբ Թումայի կաթողիկոսի Աղթամարայ, որք աղօթէք տուք զոգորմիս»:

Ս. Խաչի հիւսիսային դրան հանդէպ շինուած են երկու կամարակապ փոքրիկ մատուռներ, որոնցմէ մէկուն մէջ գետեղուած է միւռոնի կաթսան եւ միւսին մէջ դրուած են քահանայական զգեստներ եւ հոն քահանաները կը զգեստաւորուին, վասն զի միանգամայն աւանդատուն է: Ս. Խաչ եկեղեցւոյ ձախակողմեան աւանդատան մէկ կողմը արձանագրուած է «... դարուն կտակի իմով ձեռամբ Գազկա հաց արքայիս», իսկ եկեղեցւոյ հարաւային կողմը, տանիքի մերձ «... խարհակալ թագաւորութեան... հայ-

կազման ... յի զգուժմբ Հայոց» (Հմմտ. եւ Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 277) :

Ս. Խաչի<sup>5</sup> անդին հարստութիւնը կը կազմէ Կենաց փայտի մէկ մասունքը, որ եկեղեցւոյ աջակողմեան խորանին մէջ կը պահուի (Հմմտ. ի մէջ այլոց Տաշեան Հ. Յ., Մայր ցուցակ Մխիթ. Մատ., էջ 879) :

Ս. Խաչի հարաւ արեւելեան կողմը կը գտնուի Ս. Ստեփանոս կիսաւեր եւ փոքրիկ եկեղեցին, շինուած 1293ին Ստեփանոս կաթողիկոսի օրով Հոռոմշահի որդի Սարգսի եւ Ստեփանոսի ծախքերով (աւանդութեան մը համեմատ շինուած Վարդ Պատրիկի հրամանով եւ Սիմէոն ճգնաւորի խորհրդով, Հմմտ. Ազգ. Հանդ., 1913, էջ 23) : Սոյն եկեղեցւոյն դրան ճակատին վրայ արձանագրուած է՝

«ՁԽԲ (1293) ի հայրապետութեան Տոն Ստեփանոսի շինեցաւ եկեղեցիս ծախիւք սրբանեալ կրանաւորացն Սարգիսի եւ Ստեփանոսի որդեացն Հոռոմշահի յարգար վաստակոց իւրեանց. կատարեցաւ յիշատակ հազոց իւրեանց եւ ծնողացն եւ ազգականացն. որք հանդիպիք յիշեցէք ի Քրիստոս» :

Աղթամարի կղզիին արեւելեան հիւսիսային ծայրը կայ փոքրիկ մատուռ մը, որ կը համարուի Թամար թագուհիին աղօթատեղին : Կ'աւանդուի թէ հոս եւ ոչ թէ Չորոյ վանքի մէջ ամփոփուած ըլլայ Յովհաննէս Զ. Դրասխանակերտցիի մարմինը : Իսկ կղզիին արեւելեան-հարաւային ծայրը կան երկու մատուռներ Ս. Գէորգի եւ Ս. Աստուածածնի նուիրուած : Վերջինս կարմիր քարերով շինուած է եւ կը կոչուի նաեւ Կարմիր եկեղեցի :

Ս. Խաչի արեւելեան կողմն է կաթողիկոսներու յաւիտենական ննջավայրը՝ գերեզմանոցը, ուր շիրիմներու վրայ կարելի է կարգաւ մի քանի արձանագրութիւններ եւ իմանալ ննջեցեալը :

Եկեղեցւոյ կից շինուած են կաթողիկոսարանը կամ վեհարանը, ուսումնարանն ու միաբաններու եւ ուխտաւորներու սենեակները կամ բնակավայրերը<sup>6</sup> :

Վեհարանի դրան ճակատին վրայ արձանագրուած է «Վեհարանս եւ դպրոցս նոր հի-

<sup>5</sup> 1656ին Փիլիպոս Մոկացի Ս. Խաչ եկեղեցւոյ ի տես կ'երգէր՝ «Տաղ Աղթամարայ Սուրբ Խաչին. փոռաց անդի տաճար տէրունի, Տուն եւ Տաղաւար հողոյն ճշմարտի» (Այլինեան Հ. Ն., Հաւաք. յիշատ. Երևան 1926, թղ. 25ա-33ա) :  
<sup>6</sup> Հմմտ. Արեւելք, 1901, թ. 4737 եւ Բելգանդիոն, 1903, թ. 5392 (Արտաշէս) :

մանց կանգնեալ ձօնեմ բազմակարօտ իմ աղ-գին ի կայսրութեան ինքնակալին օսմանեան Համիտ երկրորդ վեհապետին յաղթական, թէպէտ եւանդ սիրոյս վաղուց ստիպէր, բայց զբաղմունք իմ հոծ զործով ոչ ներէր, քան զամէն ինչ նուիրական էր հողուոյս ընդ շինութեանց զբարոյական առեալ լոյս, ուսումնասէր մանկամբ հայոց ջանալ միշտ, զիմ սպակիր ժողովրդեան ջնջել վիշտ. Տէր Խաչատուր կաթողիկոս Ռչտունցի, ձեր աղօթից կարօտ ծառայ Յիսուսի» :

Իսկ վերնայարկ սենեակներու ճակատին կայ՝ Սենեակք այսօրիկ հիմանց նորոգի ջանիւք Յակոբայ եպիսկոպոսի բնիկ Խիզանցի Խարխոյ գիւղացի, բնակողք ի սմա միշտ սուք զողորմի թվ. ՌՅԻԲ (1873, Ազգ. Հանդ., 1910, էջ 209—210) :

Աղթամարի «դրսի վանքն» է Ախալանքը, որ կը գտնուի Բյնունեաց ծովի եզերքը : Ունի օղասուն եւ կոկիկ սենեակներ, վեհարան կամ կաթողիկոսարան, ուր տարւոյն մեծ մասը կ'անցնէր կաթողիկոսը (Փորձ 1879, V, 62) : Ունի նմանապէս ազարակ ու շտեմարան եւ լաւ ջուր, որ նաևով ամէն օր կղզին կը տարուի բնակիչներու խմելիքի համար : Ախալանքի շէնքերու մեծ մասը կ'առուցուած է ջանքովը Յակոբ եպիսկոպոս Հիզանցիի (Հմմտ. Սրբավայրեր Շէրենցի, էջ 116—117 եւ Արեւելք, 1903, թ. 5402) : Դրսի վանքն իր շուրջն ունի ընտիր վարելահողեր, հանդեր ու հովիտներ, մրգաւէտ պարտէզներ ու պրակներ : Արտօսի եւ Առնոսի լանջերէն դոտողալով սահող երկու մեծ առուներ հանդ ու այգեստան կ'ոռոգեն եւ կը դարձնեն վանքապատկան ջաղացները (Սրբավայրեր, էջ 116—117) :

Այս անպաճոյճ նկարագրութեան յետոյ հոս կը յաւելում Թ. Արծրունիի գեղեցիկ նկարագրութիւնն ու տեղեկութիւնները նկատմամբ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյն՝

«Յաղագս գերապայծառ եւ պանծալի եկեղեցւոյն, որ յԱղթամար քաղաքի, որոյ նիւթ նպաստաւորութեան քարանցն բերաւ յերկրէ հեռաստանէ, զորոյ մեք զիրն եւ գտեղին հաստեալ յայտ արասցուք :

Ի ժամանակս շինութեան հոյակապ եւ հռչակաւոր եւ բարձրանշան քաղաքին Աղթամարայ բարձրացոյց Փրկիչ մեր Յիսուս զբաղուկս օծելոյն իւրոյ Գագկայ հարստահարել զգազանաբարոյ ազգն Իսմայէլի, զոր կապեաց զձեռանէ իւրմէ հաստահիմն խոր-

հըրդովք եւ պատերազմական ուժեղ արութեամբք իբրու զանդանաւանաւ իւիք զկզակս նոցա ճմբեալ թռչնացուցանէր... : Եւ յառնել արքայի զայսոսիկ յաճախեաց պատերազմաւ եւ ի վերայ Ասորեստանի եւ զաւսոս բազումս ամբոցովքն հանդերձ ինքն ձգեալ կորդեաց : Եւ տեսեալ մերձ ի գրունս Ասորեստանի ամբոց մի յիշխանատանն Աղճնեաց ի գեօղն Կոստոմ կոչեցեալ, լինելով սեփհականարար Չուրարեկն կոչեցեալ ազգի սպառ սպուռ կորուսեալ ջնջէ զազգն եւ զշինուածս ամբոցին ի հիմանց տասպալեալ՝ զքարինս նորա բարձեալ բերէ ի վերայ մկանաց ծովուն ընծայելով ի նիւթ շինութեան սրբոյ եկեղեցւոյն, կանգնելով փոխանակ բազնածեւ պղծալից յարկաց զտաճար փառաց : ...

Եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանուէլն, զոր ի վեր անդր ցուցաք, այր լի իմաստութեամբ եւ զօրաւոր ի գործս իւր հրաշակերտէ գեղեղեցին զարմանադործ արուեստիւ եւ զոր վերագոյնն ցուցակ կրօնաւորն ձեռն տայ նկարագրել զքարինսն ճշգրտագործ նմանահանութեամբ սկսեալ զԱրաշամայ եւ ի Դաւթէ եւ մինչեւ ցտէր մեր Յիսուս Քրիստոս, զդասս մարգարէից եւ առաքելոց յօրինեալ ըստ իւրաքանչիւր հանդիսի զարմանագործ տեսեամբ : Ստեղծագործեալ ջուրկաղէ եւ ի կարգս եկեղեցւոյ զհոլովս երէոց եւ գերամս հաւուց, միանգամայն եւ զդասս զազանաց խողից եւ առիւծուց, ցլուց եւ արջոց ընդդէմ միմեանց զարգարեալս զկենդանականին նոցա յուշ առնելով զմայր, որ է յոյժ ըզձալի իմաստնոց, ամեալ զթիկամբք եկեղեցւոյն եւ շրջապատ պարունակ (բարունակ) մի պանծալի մանրամասն հաստեածովք յօրինեալ, կերպագրեալ որթս խաղողաբերս սյգեգործովք եւ գազանովք եւ սողնովք հանդերձ համակեալք, որոց եւ կերպարանքն այլ եւ այլ զանազանութեամբք ըստ իւրաքանչիւր մասին առբերեն զտեսակս :

Իսկ ի չորից կողմանց ի վերայ գաղաթան սրբութեանցն ճշգրտագործեալ զչորից աւետարանչացն պատկերս, որք եւ արժանաւորապէս իսկ են պսակ ուրախութեան սրբոյ եկեղեցւոյ եւ վերագոյն քան զամենայն սուրբս :

Նկարագրեալ է տեսնողներով եւ զփրկչական պատկերս, որ վասն մեր զգեցաւ մարմին երեւելով մարդ եւ է ի կամարս արեւմտական խորանին նմանական ճշգրտութեամբ յօրինեալ է ընդդէմ Փրկիչին եւ զփա-

ռազարդ պատկեր արքային Գագկայ, որ մեծագործ հաւատով բարձեալ ունի գեղեղեցին, ի վերայ բաղկանցն իբրեւ զսափորն ոսկի լի մանանայիւ եւ իբրեւ զտուփ մի ոսկի անուշահոտութեամբ լցեալ, կայ առաջի Տեառն, կերպագրեալ այնպէս, որպէս թէ զթողութիւն խնդրեացէ մեղաց... : Դարձեալ եւ ի հարաւակողմն ի վերայ դրան եկեղեցւոյն յօրինեալ է ի տեղի գահոյից ի բարձանց ի խոնարհ կամարածեւ աստիճանօք զէջան ունելով, որպէս զի իցէ տեղի աղօթից թագաւորին զուսպ եւ զերծ ի մարդկանէ, որով ի միտս իւր եկեալ անդադապէս ընդ Աստուծոյ խօսեսցի :

Իսկ ի ներքուստ կողմանէ զսրբութիւն սրբութեանցն հրաշալիս իմն յօրինէ նկարապաճոյճ գեղովք զբարձք արծաթապատօք եւ լի ոսկեհունն զարդիւք ոսկեպատ պատկերօք եւ ակամբ պատուականօք եւ մարգարտահիւս կարդիւք եւ պէսպէս երեւելի եւ պայծառ սղասիւք, զոր հրաշափառապէս երեւցոյց մեղ երկրորդ Երուսաղէմ, միանգամայն եւ գունն վերին Սիոնի... :

Իսկ զօր նաւակատեաց սորա գասիւք եպիսկոպոսաց եւ իշխանաց շքեղացուցանելով տօն մեծ ուրախութեան կատարէ մեծապարծ պարծանօք յիշատակ ազգաց յազգս : Ահա ասացաք որ ինչ յաղագս սրբոյ եկեղեցւոյն» : (Թովմայի Արծրունեոյ՝ Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ 1887, էջ 297—299) :

«Եւ քանզի էին ի դրան արքունի գումարեալք արուեստաւորք բազումք : ... հրամայէ թագաւորն շինել տաճար մի քառանկիւն իջ. կանգնաւ ունելով զչափ լայնութեան եւ երկայնութեան, նմանապէս եւ ի բարձրութիւնն, որոյ որմոյն լայնութիւնն երեք մեծաքայլութեամբ չափով ունի զպարզուածսն զունդ անապակ կրոց եւ քարի, իբրեւ զհալուածս կապարի եւ պղնձոյ ընդ միմեանս խառնեալ եւ շինուած տաճարին ի հիմանց անտի մինչեւ ցլուլիս նորին ի թոխս կաղմեալ առանց սեան ունի զհաստատութիւն եւ է որ արգարեւ արժանի զարմանալոյ ի վեր քան զմիտս : Ունի եւ խորանս կամարակիցս եւ անկիւնս եւ շրջապատս զեղապաճոյճս անթիւ մտաց եւ անդննելի աչաց, ունի եւ գումբէթս երկնահարթս ոսկեզարդս եւ լուսաճաճանչս...» :

Եւ է կարգ շինուածոյ տաճարին ասեղ իմն եւ զարմանալի եւ այնքան բարձրագոյն

և անհաս է մտաց զոր օրինակ թէ իմաստուն ոք այր ընդ մի կարգ խորանի միով զբազում ժամս նայեսցի, արտաքս ելեալ ոչինչ յորոց նայեսցան պատմել ումեք կարասցէ: Վասն զի են ի նմա ոսկեզարդ գահոյք, յորս բազմեալ երեւի արքայ նազելի ճոխութեամբ շուրջ զիւրեաւ ունելով պատանեակս լուսատեսակս, սպասաւորս ուրախութեան ընդ նմին եւ դասս գուսանաց եւ խաղս աղջկանց պարմանալոյ արժանիս, անդէն եւ սուսերամերկաց հոյլք եւ ըմբշամարտաց պատերազմունք. անդ եւ դասք առիւծուց եւ այլոց դահանաց եւ անդ երամք հաւուց զարդարեալք ի պէսպէս պաճուճանս, զոր եթէ զամենայն որ ի նմա գործք ի թիւ ոք կամեցի արկանել բազում աշխատութեան պէտք են անձինն եւ լսողաց:

Եւ է փառք տաճարին անհզ իմն եւ զարմանալի եղեալ են ի նմա դրունք հատուածոյք մանր յօրինուածով եւ հրաշալի գեղգեղամար, ի բանալն իւրեանց երկրացիկք են, օղաբերք զովացուցիչք, իսկ հուպ առ միմեանս գովով երեւին իբրեւ զմի պատկեր:

Պատմեաց մեզ եւ հաւատարիմ ոտտիկան մի ի գործավարաց քաղաքին, եթէ եմուտ ի շինուած տաճարին երկաթ լտերս իբրեւ ՄՌ եւ հաւաստապէս ճշմարտութեամբ նուազեաց ասելն, քան թէ առատութեամբն յաւելեաց ի բազումս: Իսկ եւ նիստ փառաց տաճարին յամենայն կողմանց գաւառին ի մէջ քաղաքին երեւի իբրեւ զմեծ մի բլուր, ոչինչ նուազեալ բարձրութեամբ քան զբարանձաւ ծայր կղզոյն» (Թովմ. Արծր., էջ 295—296):

Հ. Ինձիճեան դիտել կու տայ որ Թովմաս Արծրունին իր նկարագրութեան մէջ Աղթամարի եկեղեցւոյն անունը չի յիշատակեր, թէ եւ հարեւանցի կ'ակնարկէ թէ Ս. Խաչ Բլլալու է (Անդ, էջ 310 որոշ կը յիշատակուի՝ Ս. Խաչ): Նա կը համարէ թէ՛ Ս. Խաչ կոչուած Բլլալու է Դպրավանքի Ս. Խաչին հոս ամփոփուելովը, վասն զի Վարդան Աշխարհապետի իսկ եւ իսկ յետ շինութեան յԱղթամարի (ի ձեռն թէ՛ զորոս Ռչտունիի) կը յարէ «ի դպրավանից տարան զխաչն որ յանուն Ս. Աստուածածնին»<sup>7</sup> (Ստորագրութիւն, էջ 177):

<sup>7</sup> Հոս «ի սուրբ կաթողիկէն, յաստուածազարդ եւ գեղապանոցն սուրբ եկեղեցւոյ եւ գեղապանձ աւանանկողութեան սուրբ Խաչին... եր ի պահեստի գրանձս աստուածայինս գաթոս մերոյ Լուսաւորչի գՊարթևիին Գրիգորի եւ գեղան սրբաբար աստուածային խորհրդոյն եւ գրօտին սուրբ միջոյն եւ զպաւսական ամենազոր ակոյն... եւ զհոգաբարձս աշխատասէր

Պատմական ստորդ իրողութիւն է, որ Գաղիկ Արծրունի թագաւորին մեծ մտքին եւ ուժեղ կամքին մէկ գեղեցիկ արդիւնքն է Ս. Խաչ, որուն կարող եւ ճաշակի տէր ճարտարապետն եղած է անուանին Մանուէլ (հմմտ. նաեւ Saint-Martin, Mémoires hist., Բ., էջ 428 եւ Ինձիճեան Հ. Դ., Հնախօսութիւն, Գ., էջ 140):

Նորաշէն եկեղեցւոյն բացումը մեծահանդէս կը կատարուի (Բաղմալէպ, 1897, էջ 380—388): Չայն կ'օժէ Գէորգ կաթողիկոսը, որ հետը կը բերէ Ս. Լուսաւորչի ալէն եւ ուրիշ մասունքներ: Հանդէսէն վերջ Յղիսէ հայրապետ կը կարգուի եւ Աղթամարի թեմը կը դժուի:

3. ԿԵԱՆՔԸ ԱՂԹԱՄԱՐԻ ՄԵՋ — ԳՐԶԱԳՐՈՒԹԵԱՆ ԾԱՂԿՈՒՄԸ

Ապագային վերապահելով Աղթամարի կաթողիկոսներու<sup>8</sup> մասին ընդարձակ ուսումնասիրութեան մը հրատարակութիւնը<sup>9</sup>, հոս պիտի բաւականանամ նշանակելով միայն այն անցքերն ու տեղեկութիւնները, որոնք ուղղակի Աղթամարի վանքին կը հային:

Աղթամարի կաթողիկոսութեան բուն շարքը կը սկսի Դաւիթ Ա. Արծրունիով (1113—1165?), որուն ժամանակ «ի նոյն աստուածարնակ կղզւոյն Աղթամար ի դուռն սուրբ Խաչին» կը թաղուի Արդմսեհ Կիւրապաղատը: Հոն կ'ամփոփուի եւ անոր կողակցին աճիւնը (Թովմ. Արծր., էջ 315):

Միթէ Դաւիթ կաթ. ի յաջորդներէն<sup>10</sup> եղած է Ստեփանոս (Բ.) Աղթամարցին, որ

ստիցն սուրբ կուսին Հոփսիմեայ եւ զփողպարն ներկեալ սուրբ արեամբն եւ զբազում սուրբ մարտիրոսին տղային Արդմսեհ... եւ զայլ եւս նշխարս մարտիրոսացն եւ զնշան տէրունական Խաչին, յորոյ վերայ էր կաթուած արեան կենարարին ընդելուզեալ ոսկով եւ մարգարտով, զոր ետ տէր ի ձեռն սուրբ եւ երջանիկ հայրապետին արհիպիսկոպոսի Տեառն Դաւիթ, որ դեռ եւս կոչի սուրբ Նշան Ապարանից» (Թ. Արծր., էջ 310):

<sup>8</sup> Աղթամար կաթողիկոսները Ս. Խաչ վանքի առջնորդներն էին:

<sup>9</sup> Աղթամարի կաթողիկոսներու եւ կաթողիկոսութեան վրայ գրած են՝ Լեւոնեան Խաչիկ՝ «Աղթամարայ կաթողիկոսները սկիզբէն ցվեքը» (Բիւզանդիոն, 1900, Թ. 1190—1200 եւ 1202—1205), Էփրեկեան Հ. Ս. «Աղթամար» (Բաղմալէպ, 1897 եւ 1896), Ակիւնեան Հ. Ն., «Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա 1920 (նախապէս հրատարակուած «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ): Էփրեկեան եւ ուրիշներ շատ անգամ իրենց ուսումնասիրութիւններու մէջ նկատողութեան առած են «Աղթամարայ կոնդակը», զոր հրատարակած է Մաքսուտեան Մեսրոպ վարդապետը (Էջմիածին 1916) եւ որուն նոր բաներն ուսումնասիրած է Աճառեան Հ. (հմմտ. Բաղմալէպ, 1923, էջ 366—360): — Աղթամարի մասին յօդուածներն ունի Էփրեկեան Հ. նաեւ «Գեղունի» (1905, էջ 66) եւ Բնաշխարհիկ Բառարանի մէջ (Ա., էջ 100):

Յովհաննէս վանականի աշակերտած է (Ակիւնեան Հ. Ն., Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա 1920, էջ 41): Սոյն Ստեփանոսի յաջորդն է համանուն Ստեփանոս Գ. (1272—1296?), որուն օրով<sup>10</sup> կը շինուի Ս. Ստեփանոս եկեղեցին (հմմտ. վերը):

Հաւանականօրէն 1296ին կաթողիկոս կ'ընտրուի Չաքարիա Ա. Սէֆէտինեան, որ շինարար գործունէութիւն կ'ունենայ. «ի յաթոս հայրապետութեան իւրոյ ի կղզիս Աղթամար ի դուռն սուրբ Խաչին շինեաց գեղեցիկ եւ մեծանիստ տեղեօք ի թիկունս սուրբ Խաչին զժամատուն մեծ յաւուրս ձմերայնոյ: Իսկ ի կողմն արեւմտից զժամանակն (սրբազրել՝ զժամատուն) ամարայնոյ մեծանիստ կամարակապ ձեւով, կրակապ եւ սրբազործ, բերեալ զքարինս նորա յաշխարհէն Խլաթայ բազում աշխատանօք ի վերայ անդնդային ծովու եւ ետ գծազրել յիշատակ հոգւոյ իւր զիւրք որ կոչի Տօնակուն... եւ դարձեալ վերնատունս բազումս բնակութիւն ամարայնոյ շինեալ գեղեցիկս եւ վայելուչս ի վերայ դարպասին, զոր մեծ պարոնն Սեֆեղին էր շինեալ յաղազս գաւակին իւրոյ տէր Ստեփանոսին եւ այլ բազում շէնս եւ անշէնս հաստատեալ հաւատով եւ յուսով» (Թ. Արծր. շար., էջ 322—323):

Չաքարիա Աղթամարի նիւթականին նպաստ ընելու նպատակով կը հաստատէ «Վանական կողոպուտ» կոչուած օրէնքը (Բիւզանդիոն, 1900, Թ. 1193):

Սոյն կաթողիկոսի օրով «յաստուածախնամ կղզիս Աղթամար կը գրուի Աւետարան մը (Լուծայ, 1903, Թ. 5, էջ 59) եւ Դանիէլ Աղթամարցին Թովմ. Արծրունիի պատմութիւնը կ'արտագրէ խոշոր յաւելուած մը (Անդ, էջ 319—320): Այս Դանիէլ գուցէ աշակերտն էր Սիմէոնի, որ Խաչատուր քահանայի խնդրանքով 1277ին կը գրէր Գործք Առաքելոց, կաթողիկեայ Թուղթք եւ Յովհաննու Աւետարան «ի կղզիս Աղթամար ընդ հովանեաւ սուրբ Խաչիս (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ.): 1309ին Դանիէլ կը գրէ Թուղթք Պաւղոսի «ի հայրապետութեան տէր Չաքարիայի» (Հանդ. Ամս., 1923, էջ 73), իսկ 1316ին «ի գեղեցիկ եւ յամար կղզիս Աղթամար կոչեցեալ» կը սկսի

<sup>10</sup> 1252ին (?) Հայրապետ արեղայ Աւետարան մը նուէր կու տայ «ի սուրբ Խաչի վանքն յԱղթամար» (Բարխուդարեան, Արցախ, էջ 219):

գրուել Կիւրղի Կոչունն ընծայութեան (Կարինեան, Յուց. հայ. Ձեռ. էջմ. Թ. 749) եւ 1332ին Կարապետ կը գրէ Աւետարան մը (Լաւայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վաստուրականի, էջ 182), իսկ Թաւրոսան խաթուն Աղթամարի կը նուիրէ 1336ին գրուած Աւետարան մը (Անդ, էջ 186—190):

Երկարատեւ կ'ըլլայ Չաքարիայի կաթողիկոսութիւնը: Թէեւ չէ հասած մեզի անոր տապանագիրը, բայց բարեբաստօրէն ունինք անոր յաջորդին դամբանագիրն «ի թվին ՉՂԵ (1346) վախճանեցաւ աղքատասէր հայրապետն Ստեփանոս կաթողիկոս ամենայն Հայոց, ազգաւ Արծրունի, Աստուծոյ ողորմութիւնն աթոռակից արասցէ զնա սրբոց հայրապետացն, ամէն» (Ազգր. Հանդ., 1910, էջ 210. Բիւզանդիոն, 1900, Թ. 1194 եւ Ակիւնեան Հ. Ն., Գաւազանագիրք Աղթ., էջ 61):

Գրեգոր գրիչ 1355ին յԱղթամար կը գրէ Աւետարան մը (Լաւայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 205—203), իսկ 1366ին Ատոմ իր գրած Ոսկեփորիկին մէջ կը մտախօսի յիշել «եւ դուստունակիցն մեր զՍտեփանոս կրօնաւոր ի սուրբ Խաչին Աղթամարայ (Սարգիսեան Հ. Բ., Մայր ցուց. Հայ. Ձեռ. Մատ. Միւթ. ի Վենետիկ, Բ., էջ 846. հմմտ. եւ Թանգարան հայկ. հին եւ նոր դպրութեան, Ա., էջ ԺԴ եւ Բ., էջ ԺԱ): 1371ին կը գրուի ձառնոց մը, ուր յիշատակարանին մէջ կ'աւանդուի թէ Ս. Խաչի կրօնաւորներու թիւն է՝ 15 (Բիւզանդիոն, 1900, Թ. 1194):

Վերոյիշեալ Չաքարիայի անուանակիր՝ Չաքարիա Բ. ի (1369—1393) օրով «յաստուածաբնակ կղզւոյն Աղթամարայ ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչիս» 1389ին կը գրուի ձառնոց մը (Արարատ, 1911, էջ 764) եւ 1392ին Աւետարան մը (ի ձեռն Կարապետի, Լաւայեանց, Յուց. Վասպ., էջ 225—228 եւ 1393ին ուրիշ Աւետարան մը (Չաքարիայի ձեռքով, Նօտաք, էջ 1—2): Այս շրջանին Աղթամարի մէջ կան սա արձանագրութիւնները «թվ. ՊԺԳ (1364, գուցէ ՊիԳ=1374) Հայոց կաթողիկոս տէր (տեառն) Չաքարիայ կարողութեամբն Աստուծոյ եւ աջողութեամբ նորին կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հոգւոյ իմոյ, որք երկրպագանէք յիշեցէք ի Քրիստոս Յիսուս» (Սարգիսեան Հ. Ն., Տեղադրութիւնք, էջ 278. Ազգր. Հանդ., 1910, էջ 210) եւ «...Գուռճիբէկ եւ զկողակիցն Մէլիք խաթուն յիշեցէք ի Քրիստոս, թվ. ՊիԵ» (1376,

Աղբյուր. Հանդ., 1910, էջ 211. Ակինեան Հ. Ն., Գաւազանաղբիւրք, էջ 67):

Զաքարիա Նահատակի յաջորդն է Դաւիթ Գ. (1393—1433), որուն ժամանակ Գրիգոր Տաթևացին Քաջերունեաց նահանգը Աղթամարի իրաւասութենէն կ'ազատէ եւ որուն վերջին տարիները Փերի բէկ Աղթամար կը գրաւէ եւ վիշտ ու տառապանքի կ'ենթարկուին կաթողիկոսն եւ միաբանները<sup>11</sup> (Ակինեան Հ. Ն., Գաւազանաղբիւրք, էջ 70—75. հմմտ. եւ Դիւան, Ժ., էջ 10):

Այս կաթողիկոսի օրով Աղթամարի մէջ գրչապրութիւնը բաւական կը զարգանայ.

Կը գրուին՝  
1399ին՝ Աւետարան մը ի ձեռն Զաքարիայի (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 235—236, 1400ին՝ ուրիշ Աւետարան մը (Քօսեան Հ. Յ., Յուլ. հայ. Ձեռ. Արծնեան վարժարանի ի Կարին, անտիպ., Թ. 16), 1401ին՝ ձառնտիր մը (Նօտարք, էջ 14), 1403ին՝ նորէն Աւետարան մը (Նօտարք, էջ 19), 1404ին՝ Մաշթոց մը (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 276), 1409ին՝ Տօնական մը (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ., էջ 999), 1418ին՝ նորէն Աւետարան (Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 311, այլ՝ Աղբյուր. Հանդ., 1897, Բ., էջ 286), 1419ին՝ ձառոց մը (Նօտարք, էջ 58), 1420ին՝ զարձեալ Աւետարան (Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 322—323), 1421ին՝ Աստուածաշունչ (որուն մասին ետքէն, երբ Վարազայ վանքին վրայ խօսիմ), 1421ին՝ ձառոց մը (Նօտարք, էջ 67) եւ Աւետարան մը ի ձեռն Խաչիկի (Ակինեան Հ. Ն., Հաւաք. յիշատ. Գեղամ Տէր Կարապետեանէ) ու երեք Աւետարան՝ 1420ին, 1425ին եւ 1428ին (հմմտ. Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 323, 382 եւ Նօտարք, էջ 87—88 եւ Դիւան, Ժ., էջ 1—3)<sup>12</sup>:

<sup>11</sup> «Յամի Պ եւ ութսուներորդի (1431) թուականութեան հայկական տուժարիս անհնարին աղէտ եւ մեծ կսկիծ դիպեցաւ աշխարհիս մերում: Վասն զի Ամիր Փիրի բէկն ազգաւ քուրա թոռն Ամիր Եղջնին էա զաստուածապահ եւ զանառիկ կղզին Աղթամար, որ տեղի էր ապաստանաց ամենայն աշխարհացս եւ յառ եւ աւար գերութեան վարեաց զպատք եւ զգարգը երկնամասն տաճարին եւ զբոլոր ծովեկերայս վանորէից եւ զեղորայիցս. զաստուածաշունչ մատենաքս եւ զայլ անաւթք սրբութեանցն եւ ցան եւ ցրիւ ընդ ամենայն աշխարհ տարածեաց: Որ եւ մի ի բազմաց գերելոցն է աստուածաշունչ եւ աստուածախաւս սուրբ Աւետարանս այս, որ է Աթանան գիւղին...» (Լալայեանց, Յուլ. Վասպ. Թ. 143, էջ 312/3):

<sup>12</sup> Ուր կը հրատարակուի յիշատակարան մը, որուն համեմատ «Ի գանութեան աղբին Նեոտոցայ Ամիրգա Սքանաթրին» կ'անուրի Աղթամար:

Դաւիթ իր կենդանութեանը կաթողիկոս կը ձեռնադրէ Զաքարիա Գ. (1434—1464), որ էջմիածնի կաթողիկոսութիւնն ալ իր անձին վրայ կը միացնէ եւ ղեկավար կը մեռնի: Զաքարիայի արձանագրութիւններն են՝ «(Ես) Հայոց կաթողիկոս տէր Զաքարիայ կարողութեամբն Աստուծոյ կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հողույս իմոյ, որք երկիր պազանէք յիշեալք ի Քրիստոս Յիսուս, զԳրիգոր կազմող յիշեցէք ի Քրիստոս» (Նօտարք, էջ 103) եւ «Թվ. ՊՂԳ. (1444) Ես Տէր Զաքարիա կաթողիկոս կանգնեցի խաչս բարեխաւս առ Աստուած սակս փրկութեան մեղք Ստեփանոսի եւ խաթուն Մէլէքին ծնաւդացն Տուղչահ բէկի Տովլաթ շային Ասլան բէկին, որ երկրպագանէք յիշեցէք ի Քրիստոս» (Աղբյուր. Հանդ., 1910, էջ 211ին): Զաքարիայի կաթողիկոսութեան շրջանին կը գրեն՝

1436ին՝ Դանիէլ՝ Աւետարան մը (Նօտարք, էջ 207), 1441ին՝ նոյնը՝ զարձեալ Աւետարան մը (Նօտարք, էջ 127, Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 382), 1444ին՝ Գրիգոր քահանայ՝ Մաշթոց մը (Նօտարք, էջ 134), 1444ին՝ Հայրապետ՝ Աւետարան մը<sup>13</sup> (Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 387 եւ Նօտարք, էջ 133), [1445ին՝ Թումայ Մինասենց կը նուիրէ Գանձարան մը, Դիւան, Ժ., էջ 13 եւ Նօտարք, էջ 146], 1446ին՝ Հայրապետ՝ Աւետարան մը (Նօտարք, էջ 153 եւ Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 393 եւ Դիւան, Ժ., էջ 14). 1448ին՝ Ներսէս արեղայ՝ Աւետարան մը (Նօտարք, էջ 162). Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 404 եւ Արծուի Վասպուրականի 1859, էջ 182), 1452ին՝ Գրիգոր՝ Աւետարան մը (Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 414—416), 1452ին՝ Մինասենց Թումայ՝ Նարեկ մը (Նօտարք, էջ 170), 1452ին՝ Ստեփանոս արեղայ՝ Աւետարան մը (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Տէր Աւետիսեանի Նոր Զուղայի հայ. ձեռ. ցուցակէն), 1454ին՝ Գրիգոր Աւետարան մը (Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 579, հմմտ. Տաշեան Հ. Յ., Մայր ցուց. Միւրթ. Վիեն., էջ 891), 1457ին<sup>14</sup>՝ Ներսէս՝ Աւե-

<sup>13</sup> Թումայ Մինասենց 1444ին կը կազմէ սոյն Աւետարանը. հմմտ. եւ Դիւան, Ժ., էջ 12):

<sup>14</sup> Յիշատակարանի մը մէջ կայ «Ի թուոյս Հայոց ԶԶ (1457), որ ես անպիտան ծառայ սպասաւոր սրբոյն թումայի առաքելոյ սքանչելագործ սուրբ գերեզմանին Տէր Արթուրձ վարդապետ, որ ի յԱղթամար սուրբ Խաչին անուրի չորս դումիչ (գոմէչ) եւ չորս եղ եւ անի համբուրեց փաբէն մեր վանիցն է, ով ոք յանդգնի սուրբ առաքելոյ անէծքն ի վերայ նորա եղիցի ամէն».

տարան մը (Նօտարք, էջ 185), 1458ին՝ Յակոբ կրօնաւոր Մաշթոց մը (Կար., Յուլ. էջ 945), 1458ին՝ Ներսէս Աւետարան մը (Արարատ, 1910, էջ 625), 1460ին՝ Ներսէս՝ Աւետարան մը (Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 433), 1460ին՝ Յովհաննէս ձառոց մը, որ հետեւեալ կարեւոր յիշատակապրութիւնն ունի.

«Եւ արդ գրեցաւ սա ի քաղաքս Արծկէ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս եւ Ս. Ստեփանոսի ձեռամբ անարժան եւ մեղսամած գրչի Յովանիսի ի թուականիս մերում Զ եւ Թ. (1460)... ի հայրապետութեան Տեան Զաքարիայի ընդհանուր Հայոց կաթողիկոսի...: Եւ ես անպիտան զծողս Յովանէս տեսի զփափազ Ստեփանոս մուղղատուն, սկիզբն արարի եւ աւարտեցի... Եւ աղաչեմ յիշել ի Տէր Աստուած զանյաղթ նկարող սորա զտէր Մինաս սրբանեալ կրօնաւորն, զքաղցրատեսն եւ զհեղահողին, զոր զորմածն եւ զաղքատութն... որ եւ դ. տարի եղբայրական սիրով նախախնամեաց զմեզ յԱղթամար կղզիս...: Ես Դարիսցայ (որ եւ Ստեփանոս միայնակեաց) սուտանուն մուղղատի նուիրեցի զանձս (զգանձս) աստուածային սուրբ աթոռոյս սուրբ Խաչիս Աղթամարայ ձեռամբ նորընայ հայրապետիս մերոյ Տեան տէր Ստեփանոս կաթողիկոսի ամենայն Հայոց եւ պարոն Սմբատայ եւ տէր Ստեփանոս արհիպիսկոպոսիս, որ մակաւնուն Գօղալ կոչի եւ սուրբ կրօնաւորացս տէր Յոհաննէս փիլիսոփայի, եւ տէր Աւետիս փիլիսոփայի, տէր Հէրապետ փիլիսոփայի, եւ տէր Ստեփանոս փիլիսոփայի, եւ տէր Յուսէփի, տէր Մինաս քաջ նկարող սորին, եւ տէր Ներսէսի, տէր Մկրտչի, եւ տէր Գրիգորի, տէր Յովանիսի, եւ տէր Սարգսի, եւ քահանայիցն տէր Առաքելին, եւ տէր Մկրտչին, տէր Վարդանին եւ տէր Թումին: Եւ տրւաք զսայ զանձ անկողոպտելի... ի դուռն սուրբ աթոռոյս եւ սուրբ գերահարչ սուրբ Խաչիս... ամէն» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջ 982, ձառոց, ընտիր նկարներով):

Նոյն թուականին (այս է 1460ին) Յակոբ կը գրէ Աւետարան մը, որուն յիշատակարանին մէջ կ'ըսուի.

«Փառք... ուստի եւ տեսեալ զսորա անձառ փրկութեան խորհուրդ ոմն ի լուսա-

վկայ Աւետիս եպիսկոպոսն եւ այլ միաբանք սուրբ վանիցս» (Նօտարք, էջ 186—187):

կրան զարմից բարի կին մի Խոնձա, եւ ետ գծել զսուրբ աւետարանս...: Եւ ետ զսայ ընծայ եւ նուէր ի դուռն սուրբ Աստուածածնին Արբերդու վանացն: Եւ արդ ես յետինս ի գրչաց եւ անարժանս ի կրանաւորաց սուտանուն Յակոբ, կատարեցի զսայ... յաստուածաբնակ կղզիս յԱղթամար ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչիս եւ սուրբ Նշանիս ի հայրապետութեան Տեան Զաքարիայի, որ տիրեաց էջմիածնի սուրբ աթոռոյն եւ սուրբ Աջոյն Լուսաւորչին... Եւ արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեանս Հայոց ԶԹ (1460)...: Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր եւ զԿիրակոս վարդապետն, որ միջնորդ եղեւ սուրբ աւետարանիս եւ ետ զծագրել զսա յիշատակ սոցա եւ իւրն եւ ի վայելումն իւրն եւ իւր միաբանիցն սուրբ եւ ընտիր կրանաւորացն տէր Կարապետին եւ տէր Մկրտչին եւ Տէր Խաչատրուն եւ տէր Ներսէսին եւ միւս տէր Մկրտչին...: Աստուած արհնէ զԱղթ եւ զիւր տանուտէրքն զմեծ եւ զփոքր զՎարդան եւ զԵւաղէն, զԹաւաքարն եւ զՋանիւրէկն...: (Ի լուսանցս) Եւ յայսմ ամի շինեցին զսուրբ Գէորդ եւ աշխատեցան... Թվ. ԶԺ» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 126):

1461ին՝ Գրիգոր կը գրէ ձառնտիր մը (Նօտարք, էջ 199), Յակոբ՝ Աւետարան մը (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 436—438) եւ Գրիգոր՝ Մաշթոց մը (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 452):

Գրիգոր 1462ին՝ կը գրէ Աւետարան մը, որուն յիշատակարանն է.

«Փառք... ուստի եւ տեսեալ... հարազատ եղբարքն Սարգիս եւ Խաչատուր եւ տէր Աւագ... եւ ետուն զսա ընծայ եւ նուէր ի դուռն (այլ գրով) սուրբ Սարգիս զաւրավայրին յաստուածապահ գեօղս Մընջկանց... եւ արդ ես... քահանայ Գրիգոր... կատարեցի զսա (զԱւետարանս) յաստուածապահ կղզիս Աղթամար ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչիս եւ Նշանացս, ի հայրապետութեան տեան Զաքարիա կաթողիկոսի ամենայն Հայոց եւ պատրիարկ Վաղարշապատու եւ Աղթամարայ շնորհալից աթոռոյս, որ եւ յայսմ ամի երբ տէր Զաքարիայ կաթողիկոսն զաջ սուրբ Լուսաւորչին ի յԱղթամար ի թուականիս Հայոց ԹՃ եւ ԺԱ... (յիշին ստացողք)... ընդ նոսին եւ զամենամեղ Գրիգոր զծագրող սորա աղաչեմ յիշել ի Տէր, նաեւ զծնողքն մեր զԽաչիկ եւ զԱղիզ մեղիք» (Նօտարք, էջ 186—187):

եւ զեղբայրն իմ զհոգնակաւոր քարտուղարն զԹումայ կրօնաւորն, որ ուսոյց մեզ դաւաւեստ գրչութեանս եւ զմիւսն եղբայրն զՆաւասարդ եւ զորդին իմ զԹումայ քահանայ, որ աւղնական եղեւ մեզ եւ զերկու զլուսնն նա գրեաց եւ աշխատեցաւ ի կոկել թղթիս» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան 126) :

Եւ 1463ին՝ Թումայ կ'աւարտէ Մայր Մաշթոց մը (Նօտարք, էջ 216) : Այսպէս կը տեսնենք որ Զաքարիայի կաթողիկոսութեան շրջանին Աղթամար եղած է փեթակ մը, ուր մեղուաջան գրչագիրներ՝ Գրիգոր, Թումայ<sup>15</sup>, Ներսէս, Յակոբ եւ Յովհաննէս շատ մը արտագրութիւններ կ'ընեն :

Զաքարիայի կը յաջորդէ Ստեփանոս Գ. (1465—1489), որուն օրով Աղթամարի մէջ կը գրեն՝

1464—1465ին՝ (գուցէ 1495) Թումայ՝ Աւետարան մը (Թորոս Աղբար Բ., էջ 446—447), 1465ին՝ Հայրապետ՝ Աւետարան մը (Գաւազանագիրք, էջ 115), 1466ին՝ Մկրտիչ՝ Գանձարան մը (Նօտարք, էջ 224), 1467ին՝ Կիրակոս՝ ձառնտիր մը (Նօտարք, էջ 229) եւ Հայրապետ՝ զարձեալ ձառնտիր մը<sup>16</sup> (անդ, էջ 231), 1470ին՝ Գրիգոր՝ Աւետարան մը (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 459—460), 1471ին՝ Թումայ՝ Աւետարան մը (Գէորգեան, Յուլ. էջմ. 375), 1475ին՝ Ներսէս՝ Աւետարան մը (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Տէր Աւետիսեանի Նոր Զուգայի հայ. ձեռ. Յուլ. էջմ. 64), 1476ին՝ Հայրապետ՝ Աւետարան մը (անդ, Թ. 66), նոյն թուականին՝ Թումայ՝ Աւետարան մը (Լալայեանց, Յուլ. Վասպ., էջ 480—482), 1477ին<sup>17</sup> կը գրուի Աւետարան մը (Բարխուդարեան, Արցախ, էջ 112), իսկ 1484ին

<sup>15</sup> Աղթամարի միտրան Թումայ Մինասեցի յիշատակարաններէ մաս մը հրատարակուած է «Գիւտն»-ի մէջ, Ժ., էջ 1—14, ուր եւ իր մասին էջ 16—17 է :  
<sup>16</sup> «...Սոսկ անուն արեղայ Հայրապետ բազում եւ մեծ աշխատութեամբ հասուցի զսա յաւարտումն, զկէսն ի սուրբ էջմիածինն եւ զկէսն յատուածարանակ կղզիս Աղթամար ընդ հովանեաւ զմբէթայարկ սուրբ Սաշիս եւ սուրբ Սարգիս զօրավարիս եւ այլ ամենայն սրբոցս որ աստ կան հաւաքեալ» (Նօտարք, էջ 231, հմմտ. Ս. Սարգիս յիշատակութիւնը ի մէջ այլոց. անդ, էջ 133) :  
<sup>17</sup> Տարին անձանթ, բայց Ստեփանոսի կաթողիկոսութեան ժամանակ Ներսէս կը գրէ Մաշթոց մը (Իրաւունք, 1911, Թ. 5), իսկ ԺԵ. դարուն Ստեփանոս Աւետարան մը կ'արտագրէ (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 545—546) : Ստեփանոս կաթողիկոսին ատեն 1481ին կայ Ամիրաղէ Աղթամարի նշխրատուութիւններ կ'ընէ (հմմտ. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 282—283) :

Կոստային կը գրէ Շարակնոց (Կարինեան, Յուլ. հայ. Ձեռ. էջմ. Թ. 1543) :

Ստեփանոսի յաջորդին՝ Զաքարիա Գ. կաթողիկոսի (1489—1496) շրջանին կը գրեն՝ 1490ին՝ Հայրապետ՝ Աւետարան մը (Աճառեան Հրչ., Յուլ. հայ. Ձեռ. Նոր Բայազիտի, էջ 12. հմմտ. Սմբատեան, Գեղարքունիք, էջ 559) 1491ին<sup>18</sup>՝ Կարապետ՝ Մաշթոց մը (Թօփիճեան, Յուլ. հայ. Ձեռ. Դատեան վարդապետի, Բ., էջ 55), 1492ին՝ Կարապետ՝ Աւետարան մը (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 226), 1493ին՝ Յակոբ՝ Աւետարան մը (Անդ, էջ 519—521), 1494ին՝ Թումայ՝ Աւետարան մը (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Տէր Աւետիսեանի Նոր Զուգայի հայ. Ձեռ. ցուցակէն, Թ. 78) :

Զաքարիա Գ. ի մահէն վերջ կաթողիկոս կ'ընտրուի Ատոմ (1496—1510), որուն օրով Աղթամար կը թալանուի. «Արդ ի վերջին տարիս եւ ի յայս դառն ժամանակիս ի թվ. ԶԽԸ Քուրթն էառ զանառիկ կղզին Աղթամար եւ բազում աւերս արար եւ այնչափ մալ եւ մատրուն հայի եւ տաճկի, աւտարի եւ բնականի թալանեաց եւ տարաւ» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 317—318, Սարգիսեան շ. Բ., Մայր ցուց., էջ 577. հմմտ. եւ Բաղմովէպ, 1905, էջ 493) :

Ատոմի ժամանակ 1497ին Մատթէոս կը գրէ Աւետարան մը, (Կարինեան, Յուլ. էջմ. Թ. 254) որուն Յիշատակարանն է՝

«Փառք... Աստանօր յանկ ելեալ աւարտեցաւ... սուրբ Աւետարանս այս ի թուարբութեան հայկազեան տաւմարիս ԶԽԶ ամի յանառիկ եւ ի տիրախնամ կղզիս Աղթամար ընդ հովանեաւ սուրբ Սաշիս եւ սուրբ Սարգիս զաւրավարիս եւ ի հայրապետութեան Տեանն Ատոմի կաթողիկոսի ի դառն եւ ի վշտալից ժամանակիս, յորում ի խիստ նեղութեան եւ ի չար ծառայութեան կամք աղջին Նետողաց, զի յոյժ նեղեն եւ կեղեքեն զաղզս քրիստոնէից... : Զիս զանարժան եւ զմեղսամած գծողս յիշեցէք ի Քրիստոս զՄատթէոս անուն կրաւնաւոր եւ զճնաւդսն իմ զԿարապետ եւ զՍոնձա խաթուն եւ զհաւերնեղբայրն իմ զտէր Յովաննէս եպիսկոպոսն եւ զեղբայրն իմ զԱղիզ բէկ եւ զՂեռաբոյս զաւակ նորին զԴարման եւ զԾերուն, պահէ ի դառցասմանէ. ամէն : Եւ զուսուցելն իմ զտէր

<sup>18</sup> Գրիգոր Վարազեցին կը գրէ «Ի թուին ԶԽ (1491) Վրդանէս եպիսկոպոսն զարձեալ գողացաւ սուրբ աչն Աղթամարայ եւ երբ յիշմիածին» (Դիւան, Ժ., էջ 61) :

Յակոբ կրօնաւորն... : Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՅովսէփ կրօնաւորն, որ յոյժ աշխատութեամբ նկարեաց զսուրբ Աւետարանս» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 158, 362ա) :

Ատոմի յաջորդին՝ Յովհաննէսի (1510—1512) կարճատեւ կաթողիկոսութեան ատեն 1512ին Յովսէփ կը գրէ Շարակնոց մը (Բաղմովէպ, 1905, էջ 492) :

Յովհաննէսի կը յաջորդէ 1512ին Գրիգորիս Ա. (1512—1544), որդի Իսկէնտէրի եւ Շահնում Սաթունի, որ արտաքին բայց մանաւանդ գրական լայն գործունէութիւն կ'ունենայ : Գրիգորիս Աղթամարցին իր կրթութիւնը կ'առնուէ Աղթամարի մէջ Գրիգոր Բարունիէն եւ Յովսէփ Աղթամարցիէն, որոնք իրենց ժամանակին կրթուած մտքերէն էին ինչպէս նա ինքնին կը վկայէ (Հանդ. Ամս., 1915, էջ 21—23) : Գրիգորիս մանուկ հասակէ մէջ կաթողիկոսական գահը կը բարձրանայ եւ ցաւոտ սրտով կը տեսնէ զբաւումը Աղթամարի, ուսկէ կը ստիպուի փախչիլ Մեծօփայ վանքը : Բայց յետոյ նորէն Աղթամար կը դառնայ եւ իր ժողովրդեան համար խանդոտ ու արդիւնաշատ գործունէութենէ վերջ կը մեռնի ապաղայ սերունդին կտակ ձգելով իր բանաստեղծական զգայուն տաղերն ու երգերը (հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1915, էջ 18—64. Կոչնակ, 1914, Թ. 21 եւն) : Իր աշակերտներէն անուանի է Զաքարիա Գնունի (հմմտ. Ակինեան շ. Ն., Զաքարիա եպ. Գնունեաց եւ իւր տաղերը, Վիեննա 1910, ուր եւ Յովսէփ, Եսայի եւ Գրիգոր Աղթամարցիներու մասին) : Գրիգորիսի օրով եւ ԺԶ. դարուն Աղթամարի մէջ, որ յիշատակարանի մը մէջ կը կոչուի «գերահոգակ, զմբէթայարկ եւ երկնաման» (Հանդ. Ամս., 1915, էջ 33), կ'ըլլան հետեւեալ ողջին արտագրութիւնները՝

Կարապետ Աղթամարցին 1524ին՝ Առինչի մէջ կը գրէ Աւետարան մը, որ կը նուիրուի Ս. Նշանի (Նաթանեան, Արտօսը Հայաստանի, էջ 147—150), 1526ին՝ ի Լիմ կը կազմուի Յակոբ կրօնաւորի գրած Աղուէսագիրքը (Պալեան, Յուլ. հայ. Ձեռ. Ս. Սիոն եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց Մաղնիսայի, Զմիւռնիա 1897, էջ 14—15), 1547ին<sup>19</sup> կը գրուի Մաշթոց մը (Կարինեան, Յուլ. էջմ.

<sup>19</sup> ձառնտիր մը աւանդութեան համեմատ 1556ին Ս. Սաշի եկեղեցայ կաթողիկէն կ'իյնայ, բայց կրկին կը շինուի (Ինձիճեան, Նոր Հայաստան, էջ 151—153) :

Թ. 1005), 1573ին՝ Մելքիսեթ կը գրէ Սաղմոսարան (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 30) :

Գրիգորիս Ա. ի երկրորդ յաջորդը՝ Գրիգորիս Գ. կաթողիկոսը (1586°—1612°) Աղթամար իր գուրգուրանքին առարկայ կ'ընէ : Իր մասին յիշատակարանի մը մէջ կը կարդանք «Աստուած ողորմի ասացէք փոքր Գրիգորիս կաթողիկոսին, որ զարդարեաց աւետարանս հրաշալի ոսկով եւ արծաթով եւ ետ ի դուռն Սաշին Աղթամարայ, յիշատակ իւր... բազում յիշատակ արար սա ի դուռն Սաշիս եւ ետ չորս արծաթէ սկիհս, մեծ վառի խաչ մի եւ նորոգեաց զձմրան ժամատուն եւ զամառան եւ զսուրբ Ստեփաննոսի զլուս սալեաց եւ ձիթաղաց մի կորտէ շինեաց յարեւելից կուսէ հանդէպ կարմիր եկեղեցոյն, զի փոքր ժամանակ բանաւ, վասն այնորիկ զի ձմրայ էր տեղն : Եւ յետոյ դարձոյց ի յարեւմտեան կողմն մերձ առ սուրբ Յարութիւն եւ շինեաց ի հիմանց բազում աշխատանք եւ ազգի ազգի վշտօք եւ այլ բազում առաստաղ նորոգեաց մեծ եւ փոքր զամէնն : Եւ յետոյ զնաց յերուսաղէմ... եւ յետոյ դարձաւ յերուսաղէմայ եւ բերեալ ընծայ սուրբ Սաշին զարբաՓ շուրջառ մի հանդերձիւ, քիմիայ վարազոյր մի սուրբ Ստեփաննոսի, վեց ժամու գտակ պատկերով արծաթի առաքելոցն, երեք ժամու շապիկ Փոսանդի, թագ մի թագաւորական, չորս արծաթէ ոսկի սկիհ, երկու ցնձղայ եւ այլ բազում յիշատակ արար սա ի ծածուկ եւ յերեւելի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, հօրն Պարոն Սէֆէտինն, եւ մօրն Լրիմ Սաթունին եւ եղբարց պարոն Սէֆէտինն, Սմբատին եւ Զաքարիայ եպիսկոպոսին, եւ պարոն Իսքանտարին, եւ քուեր Մարգարիտ Սաթունին, որ արծաթէ սկիհ մի ետ ի դուռն սուրբ Սաշին... Աստուած ողորմի ասացէք տէր Բարսեղ լուսարարին, որ բազում կու աշխատէ ի հետ սուրբ Սաշին եւ ինամակալ սպասաւորին...» (Գաւազանագիրք, էջ 127—128, հմմտ. Աղանունի, Միտրանք եւ այցելուք հայ Երուսաղէմ, էջ 77) :

Գրիգորիս Գ. ի<sup>20</sup> յաջորդներէն՝ Պետրոս

<sup>20</sup> Գրիգորիսի օրով ինչպէս նախորդ յիշատակարանին իմացանք Աղթամարի լուսարարն էր Բարսեղ, որուն մասին ունինք հետեւեալ յիշատակարանն ալ «Ի թվ. ՌԾԱ (1602) տէր Բարսեղ կրօնաւոր լուսարար սուրբ Սաշին, որ մականուն Գաղոց կոչի ետ վերատին նորոգել զՊանծատետրս եւ էառ յեղբորորդոյն զանձի գարոն, որ է մերձ Ախալանից սուրբ Զօրավարին եւ յիմ արար գերահոգակ սուրբ Սաշին Աղթամարայ (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. շ. Պատուրեանէ) :

կաթողիկոսի գերեզմանաքարի վրայ (յԱղթամար) գրուած է «Սրբազան յակոբեայ (Հանդուցեայ) Պետրոս կաթողիկոս թվ. ՌՃԺԹ (1670, Ազգր. Հանդ., 1910, էջ 211) :

Բաղդասար կաթ.ի օրով (1736—1743) Աղթամարի վիճակը շատ աղաւաղելի կ'ըլլայ. «Ի ՌՃՂԲ թուովն մերում ի ժամանակս Ղազարու կաթողիկոսին մերոյ ճահկեցոյ Աղթամարու բոլոր վիճակքն զդուեցեայ ի... կաթողիկոսէն իւրեանց վասն անյարմար կացութեան եւ մանաւանդ զի զաթոռն իւրեանց ի սպառ անջբացոյց եւ ի ներքոյ բոլորից պարտուց էարկ եւ զեկեղեցական միաբանանցրուեաց եւ զինաւոր աշխարհական բնակեցոյց ի վանքն, վասն որոյ ընկեցին զնա յաթոռոյն եւ զնիկողայոս վարդապետն ոմն ընտրեալ արարին իւրեանց կաթողիկոս 21» (Ջամբռ, էջ 95) : Նիկողայոս կ'աշխատի կաթողիկոսութեան ու վանքին անկաժ վիճակը վերականգնել, ընդարձակել եւ «Ի սուրբ աթոռն ի յիշատակ կը թողու քանի մը գիրք» (Բիւզանդիոն, 1900, Թ. 1199 եւ Գաւաղանազիրք, էջ 149) :

Անոր յաջորդներէն Թովմայ Բ. (1761—1783) կը շինէ Աղթամարի եկեղեցոյ դաւիթը (Հմմտ. վերը) :

Գուցէ այս կաթողիկոսէն է հետեւեալ արձանագրութիւնը՝ «Ես Թովմայ կաթողիկոս Հայոց կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած եղբաւրն իմոյ Աշոտին, եւ որք երկրպագանէք յիշեցէք ի Քրիստոս զմեղապարտ վարդանս զկազմող սորա յիշեցէք ի Քրիստոս» 22 (Ազգր. Հանդ., 1910, էջ 212) :

— 1638ին Յովսէփ Վրդ. Աղթամարի Աւետարան մը եւ շուրջառ մը կը նուիրէ (Լաւրյանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 828) եւ 1706ին Հայրապետ կը նուիրէ Աւետարան մը (Բիւզանդիոն, 1903, Թ. 1198) :

21 1739ին գրուած Աւետարանի մը յիշատակարանին մէջ Մինաս կը գրէ՝

«Այլ եւ Աթոռն Աղթամարայ, Նաեւ կղզի է ի սմին, Որ հրաշագործ խաչն է ի նմին, Չոր է շինեալ Գաղկայ մեծին, Եւ ոչ գտանի նման սմին, Ի ձեռակերտս մարդկան սեռին Ոչ է Հայաստան 'ւ ոչ է Լատին, Ոչ է Սաղիմ ու էջմիածին» :

(Լաւրյանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 1042) :

22 Անթիւ արձանագրութիւն է (յԱղթամար) եւ այս «Ես Տէր Փիլիպոս կանգնեցի խաչս բարեխաւս առ Աստուած կենակցին իմոյ Գինէի եւ որդւոյ իմոյ Սաշատուն եւ Միքայէլին, որ յայսմ աւուր փոխեցաւ առ Աստուած եւ Լեթոյ Ինձ սուգ անմիթար, որ երկրպագանէք յիշեցէք ի Քրիստոս» (Ազգր. Հանդ., 1910 Թ., էջ 212) :

Թովմայի տապանաքարին վրայ գրուած է՝

Ով սուրբ Նշան տէրունական, Սեղան գառին զենման, Բարեխաւսեա ի մեծ ատեան վասն Թովմայ կաթողիկոսին եւ ծնողայ... Թվ. ՌՄԼ :

(Ազգր. Հանդ., 1910, էջ 211) :

Թովմայի յաջորդին դամբանագիրն յԱղթամար շատ պարզ է՝ «Կարապետ կաթ. ՌՄԽԸ» (Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 278), իսկ ասոր հակառակաթոռ Մարկոսի տապանագրին վրայ կը կարդանք. «Ի յայս դուբս անձուկ ամփոփի մարմին անուն անամփոփ Մարկոսի վեհին, սիրելի ազգին ի սէր հայ ազգին եղեալ անձնուէր, սիրով մտադիր, 1788» 23 (Ազգր. Հանդ., 1910, էջ 211) :

Կարապետին յաջորդին դամբանագիրն է՝ «Սաչս բարեխաւս առ Աստուած վասն փրկութեան հոգւոյն Սաշատուր կաթողիկոսին թվ. ՌՄԿԳին» (Սարգիսեան, Տեղագր., էջ 278 եւ Բաղմավէպ, 1898, էջ 516) : Իսկ Սաշատուրի յաջորդներէն՝ Յովհաննէս Շատախեցիէն կան երկու արձանագրութիւններ՝ «Սաչս բարեխաւս առ Աստուած վասն փրկութեան Յովհաննէս կաթողիկոսին թվ. ՌՄՀԳ. (1825) եւ «Սաչս բարեխաւս է առ Աստուած վասն փրկութեան Յովհաննէս կաթողիկոսին ՌՄՂԲ (1843, Ազգր. Հանդ., 1910, էջ 211) : Յովհաննէսի յաջորդին Սաշատուր Մովսէսի (որուն ոտքերը կը բեկանէ Աղթամարի միաբան Յովհաննէս վարդապետ) դամբանագիրն է՝

«Սաչս բարեխաւս առ միածին, Սակս փրկութեան հօտապետին վեհ Սաշատուր սրբազանին, Որ փոխեցաւ առ Տէր յերկին ի մի հազար եւ հարիւրին Հայոց մեծաց թուականին, Յունիս ամսոյ երկտասնեկին» :

(1851 Յունիս 12, Ազգր. Հանդ., 1910, էջ 211) :

Սաշատուրի յաջորդներէն համանուն Սաշատուր Շիրոյեան կը շինէ Ախավանից կաթողիկոսարանն ու դպրոցը եւ Աղթամարի թանգարանն, ուր կը հաւաքուին Ձեռագիր-

23 1792ին Հոռոմի մէջ կը մեռնի Աղեքսանդր եպիսկոպոս, միաբան Աղթամարի եւ առաջնորդ Վանի, Հմմտ. Գալէմբեարեան Հ. Գ., Կենսագրութիւն Սարգիս արքեպ. Սարաֆեանի, Վիեննա 1908, էջ 380—382 :

ներ եւ ուրիշ հնութիւններ : Նա կը վախճանի 1895ին 24 եւ կը թաղուի իր պատրաստել տուած շիրմին տակ (— Աղթամարի կաթողիկոսներն ընդհանրապէս իրենց կենդանութեան ատեն շինել կու տային իրենց դամբանները —) սա արձանագրութեամբ՝

«Սաւար շիրմիս իմ սիրուն այցելու, Ասել քեզ հոգերս, ո՛հ հունիմ ըզու, Չուսո ի դահ տունս բեկեալ նիղակաց Ազգիս դառն ցաւոց հեծութեան ի բոց Տոչորեալ հայրապետն եմ Ռշտունի Որ Սաշատուր անձս խաչին դոհեցի, Իւսեալ շինութեանց փունջս զանազան Բամեալ խաչս եւ աջս հինս ի թանգարան. Կաթնայ սուրբ իւղոյն 'ւ աղաւնին օժման, Աւետարանս, թանգ ռուբլառ, գաւազան, Թողեալ յիշատակ նուէր տաճարիս. Ունէի դեռ նոր գործոց տենչն ի յիս ի արդարեւ Բ. Համիտ վեհ սուլթան Ղօղեաց զիս ի փառս յառաջինս նշան ի մեծ պարծանս դահիս Արծրունեան, Կեանքս, խիղճս եւ հոգիս այլ սոքօք չլցան Ու հողմովք ժանդից հառաչքս ոչ շիջան, Սէրս, յոյսս՝ ի Յիսուս, բաժինս այս տապան : Օձեալ 1864 Սեպ. 12 :

Վախճանեալ 1895, Դեկտ. 22 ի Վան» : (Բիւզանդիոն, 1900, Թ. 1204, Ազգր. Հանդ., 1910, էջ 212 եւ Ակիւնեան Հ. Ն., Գաւաղանազիրք, էջ 191) :

4. ԱՄԱՆԱՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղթամարի Ս. Սաչ վանքը Վասպուրականի ամէնէն հարուստ վանքերէն էր, անոր կաթողիկոսներու իրաւասութիւնը կը տարածուէր շատ մը գաւառներու, քաղաքներու, գիւղերու եւ վանքերու վրայ 25 : Կրնար տրամադրել շատ մը տեղերու անշարժ ու շարժական գոյքերու վրայ : Ունէր մշակելի

24 Աղթամարի կաթողիկոսութեան վերջին տնօրէնացիներու մասին տեսնել Ակիւնեան Հ. Ն., Գաւաղանազիրք, էջ 168—200, ուր եւ աղբիւրներ էջ 175, ծն. 2) : — Սաշատուրին յաջորդը տեղապահ Արսէն Վ. Ախաւանի մէջ կը սկսի շինել եկեղեցի ու փոստ (Բիւզանդիոն, 1903, Թ. 1204, Հմմտ. եւ Արեւելք, 1903, դիւն, 1903, Թ. 5392, ուր եւ վանքին այդ ատեն ունեցած վիճակին մասին) : — Վանայ հերոսամարտին իրենց ազգանուէր ու քաջարի գործունէութեամբ անուանի եղան Աղթամարի դպրոցէն ելած եղբիկ եւ Գանիկ վարդապետները (Ասպարէզ, 1939, Թ. 1871) : Համեմատական պատերազմին Աղթամար ալ կողոպտուէ եւ աւերուած զերծ չմնաց :

25 1867ին առաջարկ կ'ըլլար Աղթամարի յանձնել Նարեկայ, Կապուտկողայ Ս. Յակոբի եւ Գոմայ, Ս. Սահակի եւ Ս. Կարապետի վանքերը (Մասին, 1867, Թ. 813) :

դաշտեր ու անդաստաններ (Փորձ, 1879, IV, 62, Աղատամարտ, 1909, Թ. 132) : Ստացած էր նմանապէս շատ մը թանկագին սպասներ, անօթներ եւ ձեռագիրներ, որոնք սակայն յընթացս ժամանակի անկէ փախցուած են : Իր ուխտագնացութեան օրն եղած է Սաչվերացի տօնը 26, որ օրը բաղմամբիւ ուխտաւորներ հոն կը հաւաքուէին իրենց ուխտն ընելու եւ նուէրներն ընծայելու (Շէրենց, Սրբավայրեր, էջ 120—121, Հմմտ. նաեւ Սրբանձտեանց, Մանանայ, էջ 398) :

Յաւալի է որ Աղթամարի վանքը հակառակ իր կաթողիկոսական ճիւղութեան եւ հարստութեան Վասպուրականի վրայ բարոյական ու գրական մեծ ազդեցութեան չէ ունեցած : Անոր շողջողուն աստղն է Գրիգորի Աղթամարցին եւ անոր օրով, բայց մանաւանդ անկէ յառաջ բաւական ժամանակ մը Աղթամարի մէջ ետուղեո գործունէութիւն տիրեց ձեռագիրներ գրելու : Կարելի է ըսել թէ զբնագրութեան վայր մը ստեղծուեցաւ հոն եւ փութաջան գրիչներ ու գծողներ ծաղկեցան :

Դ.

ԱՌՏԵՐԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՆՔԸ

Բնունեաց ծովի չորրորդ կղզին է Արտեր կամ Առտէր, որ կ'իյնայ Նարեկ գիւղի դիմացը եւ Աղթամարէն մղոն մը հեռու է : Արտեր կոչուած է՝ որովհետեւ այստեղ Աղթամար (որուն իրաւասութեան ենթակայ է) «արտեր» ունեցած է : Բայց հայկական բարեպաշտիկ աւանդութիւնը կղզիին անունը յուզէ դէպքի մը կը կապէ : Գրիգոր Նարեկացին Ս. Կոյսի եւ անոր քաղցրիկ Մանուկին՝ Յիսուսի սիրով բորբոքած՝ իր ճգնարանին լերան ժայռին վրայ ծնրաղի ջերմեռանդօրէն կ'աղօթէ եւ ահա անոյշ ձայն մը իր ականջներուն կը հանդիպի : Աչքերը դէպի ծով կ'ուղղէ եւ այս կղզեակին վրայ կը տեսնէ Տիրամայրը՝ գրքին մէջ Յիսուս Մանուկը : Աղու ձայնը զինքը կը հրաւիրէ՝ «Գրիգոր, եկ առ Տէր, որում ցանկանալով ցանկանայիր» : Նարեկացին ինքն իրմէ կ'ելլէ եւ ծովին ու ջրին վրայէն իբրեւ թէ ցամաքի վրայէ կը սուրայ կղզին եւ հոն իր յարգանքն ու սէրը կ'արտայայտէ Տիրամօր եւ անոր

26 1780ին Վարդապետի կերակին Աղթամար ուխտ կը կատարէր Ախիճան աղա (Դիւան, Ժ., էջ 148) :

Որդւոյն: Ահա այդ օրէն ի վեր կողմն կը կոչուի Առ-Տէր, եւ ի յիշատակ անմոռաց հոն կը կանգնուին մենաստան ու եկեղեցի եւ կը նուիրուին Ս. Աստուածածնի: Յայտնի չէ թէ ո՛վ է անոնց հիմնադիրը եւ նմանապէս թէ ի՛նչ գործունէութիւն կ'ունենան տեղւոյն միաբանները: Միայն այսքանը ծանօթ է, որ ժամանակի ընթացքին կը քանդուի ու կը քայքայուի, բայց Յակոբ վարդապետի հոգատարութեամբ կը վերանորոգուի (1766ին) նորանոր յաւելումներով եւ միաբանական կեանքի փթթումով: Սակայն դժբախտաբար շատ կարճ ժամանակի համար: Վասն զի 1772ին Յակոբ վարդապետ Բատականցին կը նահատակուի եւ իր հաւաքած հօտը կը ցրուի:

«Այժմ Առտէրի վրայ կան երկու եկեղեցի, որոնցմէ մէկուն վրայ կարդացուած է հետեւեալ արձանագրութիւնը՝

«Ի թուին ՉԽԱ. (1292) ի հայրապետութեան Տեանն Ստեփանոսի, որ մականունն հա... բարեխօս է առ Աստուած վասն վրկութեան...» (Ազգ. Հանդ., 1911, էջ 43):

Աւանդութեան համեմատ դեռ երկու դար յառաջ Սղերդ եւ Տիգրանակերտ քաղաքները Առտէրի վանքին կը պատկանին եղեր եւ անկէ անոնց հրամաններ կ'ելլէին, սակայն դարմանալի է որ այսպիսի մեծ ճութեան ունեցող վանք մը լուծեան մատնուած է, վասն զի գերացածն ոչինչ է, մինչդեռ շատ բան կարելի էր ակնկալել: Յիշատակարանի մը համեմատ Բարսեղ վարդապետի օրով (ԺԵ. դար) Տիարպէքեր քաղաքը Մշոյ Ս. Կարապետի առաջնորդութեան ենթակայ էր (Հայաստան, 1851, Թ. 51):

Առտէր ալ Բուրտերու կործանարար ձեռքը կը հասնի եւ զայն կը կողոպտէ (հմմտ. Արձագանք, 1882, էջ 313. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 153—154. Եւրեանց, Սրբավայրեր, էջ 121 Բիւզանդիոն, 1897, Թ. 135 եւ նոյնը 1902, Թ. 1571. Ազգ. Հանդ., 1911, էջ 53. եւ Էփրեկեան, Բնաշխարհ. Բառարան, Ա., էջ 249):

Ե.

ՅԻՉԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՆԵՐ

Արձկէ քաղքին հարաւակողմը, Բզնունեաց ծովի եզերքը երբեմն կը գտնուէր Արձկէոյ կամ Յիպան կողմն, որ ետքէն ծովակուռ եղած է (հմմտ. Ալեշան Հ. Ղ.,

Հայապատում, էջ 56; ծն. 1. Սարգիսեան Հ. Ն., Տեղագրութիւնք, էջ 250 եւ Հանդէս Ամսօրեայ, 1888, էջ 197. Էփրեկեան, Բնաշխարհիկ Բառարան, էջ 304): Այս կողմին վրայ շինուած էր Ս. Ստեփանոսի վանքը, որ Դաստակ ալ կոչուած էր, որովհետեւ հոն պահուած էր Ս. Նախավկայի դաստակը: «Նօտարք» ի հեղինակը կը գրէ՝ «Ուխտս է ի Բզնունիս մերձ ի Սիփան գիւղն շինեալ ի գրկի Մասիք լեւրին հզօրի եւ կայ այժմ աւերակ ի դարաւոր ամաց հետէ» (Նօտարք, էջ 166, ծն. 1. հմմտ. անդ եւ էջ 1, ծն. 1):

Վանքս իր անունն ու համբաւը կը պարտի նահատակ Գրիգոր Խլաթեցի Ծերենցի<sup>27</sup>, որ անուանուած է երկրորդ Վկայասէր. «զի ժողովեաց զիրս բազումս ի մերոց եւ յօտարաց զհնացեալսն եւ զեղծեալսն զծածուկ եւ զանյայտ պատմութիւնս ամենայն սրբոց ի խաւարէ ի լոյս եւ արար զզիրս Յայտաւորաց» (Հայապատում, էջ 560): Ինքն ալ Գրիգոր Յայտաւորներու մէջ մտնելու կ'արժանանայ իր մարտիրոսական մահովը. «... Եւ ի սոյն աւուրս եկն նենդաժոտ եւ անողորմ Բուրդն Բաղիւշոյ ի վերայ աստուածապահ քաղաքին Արձկոյ եւ հարեալ, սպանեալ, սրախողխող արարեալ զբազումս յազգաց մերոց, մանաւանդ զաստուածապատիւ եւ զաստուածապարփակ, զողորմած եւ զերջանիկ վարդապետն Գրիգոր՝ զորդի Ծերին Խլաթեցոյ ի սուրբ ուխտն Դաստակ որ Յիպան վանք վերակոչի (Թովմ. Մեծ., էջ 85, հմմտ. եւ էջ 41—43, տեսնել նաեւ Գրիգոր Խլաթեանցի հրատարակած՝ Յիշատակարան աղէտից Գրիգոր Խլաթեցոյ, պատմական վիպասանութիւն հանդերձ անոր համառօտ կենսագրականով, Վաղարշապատ 1897. հմմտ. եւ Տաշեան, Մայր ցուցակ, էջ 543): Գրիգորի նշխարները մեծ հանդիսութեամբ կ'ամփոփուին «ի սուրբ ուխտն Յիպանոյ՝ Նախավկային Ստեփաննոսի անուամբ կոչեցեալ» (Հայապատում, էջ 562. հմմտ. Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., 452): 1446ին գրուած Յայտաւորքի մը յիշատակարանի մէջ կայ՝ «Իսկ ի մերում ժամանակի... երանաշնորհ վարդապետն Գրիգոր Խլաթեցին ըստ նախնեաց Ծերենց կոչեցեալ... սրով կատարեցաւ... ի վանքն Յիպանայ (որ է նոյն անուամբ յանուն սրբոյն Ստեփանոսի ի պատիւն Բզնունեաց մերձ Արձկէ եւ կայ այժմ

<sup>27</sup> Գրիգորի երկերու ցանկը հմմտ. Տաշեան, Մայր ցուցակ, էջ 1074:

աւերակ) ի ՊՀԴ. Թուականին (Նօտարք, էջ 152 եւ անդ ծն. 2): Իսկ 1430 թուականին կը գրուի «ի ՊՀԹ Թուականուջս յաւուրս ընդհանուր կաթողիկոսի Հայոց սաստկացաւ ի վերայ (մեր) մէջ եւ մառախուղ... զի եկն ի վերայ մեր եւ երկրին մերոյ... զօրքն Օթմանայ եւ հեծեալ Ռօճկանայ զերի առին զամենայն երկիրս, հեղաւ անմեղ արիւն բազում, սպանին զմեծ Բարունապետն իմ Գրիգոր եպիսկոպոս ի վանս Յիպանոյ» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Չեռ. Մուտարկու գիւղի, օրինակեալ Գեղամ էֆէնտիէ):

Յիպանայ վանքէն էր նաեւ Յովհաննէս կրօնաւոր տարեգիրը (հմմտ. Նօտարք, էջ 167):

Խաչվէժի մը վրայ ի Յիպան գրուած է 1393ին «ՁՇահիկ վանաց հետ յիշեցէք ի Բրիստոս» (Նօտարք, էջ 1): Նոյն տարին աւետարան մը կ'աւարտի «ի վանս Յիպանայ ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի եւ Վասիլ Թագաւորի սրբոյ» (Ազգ. Հանդ., 1897, Բ., էջ 282 եւ Արձագանք, 1885, էջ 42): 1417ին Ոսկեփորիկ մը կը գրուի «ի վանքս Յիպանայ ընդ հովանեաւ կաթողիկէս սուրբ Ստեփաննոսի եւ սուրբ Նշան Վասիլ Թագաւորի...» (Նօտարք, էջ 53): Երկու տարի վերջ ալ հոն կ'օրինակուի աւետարան մը (Արարատ, 1910, էջ 624): Իսկ 1450ին Յովհաննէս դարձեալ Աւետարան մը կը գրէ եւ կը մաղթէ յիշել՝ «զմիաբան վանացս զառաքինասէր հայրապետն մեր զտէր Մինաս եպիսկոպոսն, զՅովհաննէս արեղայն եւ զՄանուէլ եւ զԱրսէն եւ զՅակոբ քահանայ, որ են ժիր մշակ ի գրուենս սուրբ եկեղեցոյս» (Նօտարք, էջ 166—167, Լալայեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 406, հմմտ. Աղթամար՝ 1460ին գրուած յիշատակարանը):

Այսքան դոյզն են վանքիս մասին հասած տեղեկութիւնները:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՅՈՒՆՍՈՒ ԿՆՅԵՐԸՆ ԶԵՌՆԳՐՈՅ Ի ԲՈՒԼՎԵՐԻՆ

(Շարունակութիւն):

15.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Պ Լ Ո Վ Դ Ի Ի

Ի Բ Բ Թ Ժ Զ — Ժ Ե Դ Ա Ր

ԹՈՒՂՊՔ՝ 206 + 4: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18½ × 14½ × 5: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ Երկսիւն 12 × 8½: — ՏՈՂՔ՝ 26: — ՆԻԻԹ՝ մագաղաք, ողորկ եւ փայլուն:

— ԿԱԶՄ՝ ամուր, փայտեայ, համակ արծաթապատ, վրան արտակարկառ գոյգ մը բանդակներով, սկիզբը՝ խաչելութիւնը, իսկ հետերը Ս. Աստուածածինը, Մառնոյ Յիսուսով: Ունի արծաթեայ գոյգ մը փակամբ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր, ընդհանրապէս լաւ պահպանուած: — ԳԻՐ՝ բոլորովին, սեւ մելամով: — ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ հրեշտակագիր, վիշապագիր եւ ընդհանրապէս բոչնագիր, բազմերանգ: — ԽՈՐԱՆՔ՝ 4, աւետարաններու սկիզբը (բղ. 32ա, 82ա, 116ա, 170ա). պարզ: — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ 10, բազմերանգ, միջակ: — ԼՈՒՍԱՆՅԱՐԱՆՔ՝ բազմաթիւ եւ պարզ: — ՆԿԱՐՔ՝ 20, սրունց 4ը՝ աւետարանիչները, միւս նկարները կը ներկայացնեն՝ բղ. 3բ՝ Աւետում, բղ. 4ա՝ Երկրպարտիւն Մոգերու, բղ. 5բ՝ Սիմէոն Ծերունի, բղ. 6ա՝ Մկրտութիւն, բղ. 7բ՝ Պայծառակերպութիւն, բղ. 8ա՝ Յարութիւն Ղազարու, բղ. 9բ՝ Չիքենեաց լեռ բարձրանալը, բղ. 10ա՝ Վերջին ընթրիք, բղ. 11բ՝ Ոսկրուայ, բղ. 12ա (վնասուած՝ անհանաչելի), բղ. 13բ՝ դէպ ի Գողգոթայ, բղ. 14ա՝ Խաչելութիւնը, բղ. 15բ՝ Յարութիւնը, բղ. 16ա՝ Համբարձում, բղ. 17բ՝ Գալուստի Ս. Հոգւոյն, բղ. 18ա՝ Վերջին դատաստան: Բաւական յաջող գործեր ունեւ, երանգագեղ եւ ոսկեղուց: — ԴԱՏԱՐԻ՝ քանի մը բուրբ: — ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ, իբր ժօ—ժէ դար: — ԳԻԻԾ՝ ԾԱՂԿՈՂ, ՏԵՂԻ՝ անձանօք: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Այրիանուպոլսոյ Ս. Թորոս եկեղեցւոյ, այժմ 1922էն ի վեր ի պահ Պոլսի (Ֆիլիպէ) Ս. Գեորգ եկեղեցւոյ գանձատունը, կրելով Ա. Պոլսոյ Հայրենակց. գոյքերու 166րդ քիւր:

Մատենան է Աւետարան: Մատթէոս (Թղ. 32ա—79ա), Մարկոս (Թղ. 82ա—113ա), Ղուկաս (Թղ. 116ա—168ա), Յովհաննէս (Թղ. 170ա—207ա): Առջեւները գլխաւորութիւնք եւ նախադրութիւնք: — Թղ. 19բ—20ա՝ Եւսեբի Կարպիանոսի սիրելի եղբոր ի Տէր, ողջոյն. Թղ. 21բ—22ա, 23բ—24ա, 25բ—26ա, 27բ—28ա՝ Համեմատական տախտակներ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ չունի: Չկան հետքեր ջնջուած կամ ինկած թղթերու:

16.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Պ Լ Ո Վ Դ Ի Ի

Ի Բ Բ Թ Ժ Զ — Ժ Ե Դ Ա Ր

ԹՈՒՂՊՔ՝ 304: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19½ × 14 × 6½: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ Երկսիւն 11½ × 7½: — ՏՈՂՔ՝ 22: — ՆԻԻԹ՝ մագաղաք, սպիտակ եւ փայլուն: — ԿԱԶՄ՝ ամուր, փայտեայ, կաշիէ խաւով մը, վրան համակ արծաթապատ, ուր կան գոյգ մը նկարներ՝ սկիզբը՝ Խաչելութիւնը, եւ հետեր՝ Համբարձումը: Կսզմի ներք լարապատ: Ունի նաեւ արծաթեայ մասնաւոր կափարիչ-փակամբ, վրան նկարներով 12 աւաքներու: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿԻ տեղ կը ծառայեն սկզբի մէկ եւ վերջի երկու մագաղաքեայ քուրթերը: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր եւ լաւ պահպան